

Անդրեաց-Տուի թու

11226

Մի գուշտի

հայ պիտիսկա արքանուղարձուն Եղիս  
Տիգ ու Ծռ Համ Համակուրյունը

338(47.925)

2-18

6-1927

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

## ՄԻ ԳԱՂՏՆԻՔ

ՀԱՅ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵջ

ՈՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արտատպած Հ.Ա.Խ.Հ. Գիտության յեկ Արվեստի հնատիտուտի  
Տեղեկագրի և շից

1920 1

614

338(47.925)

Ա-78

1927  
ՅԵՐԱԳ. Պ.

2010

ՀՅ. Դահնու ժամանելը

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ կը :

15-ի 1927  
Յանվար :

ՄԻ ԳԱՂՏՆԻ Ֆ

ՀԱՅ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԶ

Կ31

ՈՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ԶԵԿՈՒՅՎԱԾ Ե ԳԻՅՈՒՐՅԱՆ յԵՎ ԱՐՎԵՆԻ ԻՆՍԻՒՏՈՒԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ-  
ԽԱՍՏՐԱԿԱԳԻՒՅԱԿԱՆ Բաժնում 1926 թվականի գեկեմբերի 4-ին):

4036  
Հ 4-5  
3-2

«В источниках... истории сохранилось до-  
вольно много известий, рисующих экономическую  
жизнь... общества в минувшие века. К сожа-  
лению, лучших из этих известий... мы не умеем  
прочитать, как следует... Подобные известия—  
историографические загадки, шифрованное пись-  
мо, ключ к которому потерян. Пока не будет  
найден этот ключ, значительный запас таких  
известий, сохранившийся в источниках, остается  
заманчивым, но недоступным, т. е. бесполезным  
для науки материалом».

Проф. В. О. Ключевский  
(«Русский рубль», I.)

I.

Գների պատմությունը տնտեսական զարգացման պատմության կա-  
րևոր բաժիններից մեկն ե:

Թեյկ Արևմուտքում ել այս բաժինը մշակման աստիճանով բավական  
յիտ ե մնացել տնտեսական զարգացման պատմության ուրիշ բաժիններից,  
որինակ, հողային հարաբերությունների պատմությունից, բայց և այնպիս  
ընդհանուր տնտեսագիտական զրականությունը վերջին հարյուրամյակի  
ընթացքում կարող ե մատնանշել գների պատմությանը նվիրված այնպիսի  
գործեր, վորպիսիք են Tooke-ի (1823 թ.), ու սրա աշխատակից Newmarch-ի  
(1844 թ.), Maclaren-ի (1858 թ.), Shaw-ի (1894 թ.) գրքերն անզիտական  
և Wiebe-ինը (1896 թ.) գերման գրականության մեջ: Յեվրոպայում գների  
պատմությանը վերաբերող նյութերն այնքան առատ են, վոր հնարավորու-  
թյուն են տվել, որինակ, գերմանացի տնտեսագետ Հերման Փոն-Գյուլէխին՝

ԳՐԱԴԱՐԱՆ. 139 Բ. ՏԵՐԱԺ 100, ՊԱՏՎԵՐ № 2751.  
ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ Ա-ՐԴ ՏՄ. ՅԵՐԵՎԱՆ

ներկայացնելու ցորենի գների 624 տարվա մի ցանկ 1202-ից մինչև 1826 թվականը։ Նյութերի համանման ճոխությանը հենված՝ Կարլ Մաքքար ավել է հացի գների շարժման պատկերը 1641-ից մինչև 1859 թվականը՝ մեջ բերելով այս 22 տասնամյակից յուրաքանչյուրի ամենաբարձր, ամենացածր դեկտի այս գները հացի վերաբերյալ («Հավելյալ արժեքի թեորիաները», II գիրք, Բ. բաժին, 20 դրվագ):

Ոռուսաց տնտեսագիտական գրականության մեջ թեյև հատուկ գրքեր չկան Ռուսաստանում յեղած գների համապարփակ պատմությանը նվիրված, բայց այստեղ ել շատ ջանքեր ու փորձեր են արված հավաքելու և մշակելու նյութեր, վորոնք անհրաժեշտ են գների պատմություն հորինելու համար: Այսպիսի փորձերից ամենանշանավորն է պատմաբան Կլյուչևսկու հայտնի աշխատությունը «Ռուսաց ոռւբլին XVI—XVIII դարերում» վեր նադրով: <sup>1)</sup> Թեյև այս յերկի բուն նյութը սույնաց ոռւբլու (այն ել վոչ իբրև փողային մետաղի կզռի միավորի, այլ իբրև փողային անվանական միավորի) գնողունակության փոփոխություններն են զլիսավորապես, բայց այն բավական առատ փաստեր և պարունակում ոռւսական գների պատմությունից:

Այլ ե պատկերը մեզանում: Հայաստանի տնտեսական զարգացման պատմության գիտակցությունն իբրև ընդհանուր տնտեսական զարգացման պատմության մեկ անհրաժեշտ փոստի ու իբրև հայագիտության ամենահիմնական առարկաներից մեկի՝ նոր և սկսում ձևավորվել վերջերում Մեկ տասնամյակ առաջ նրա անունն անգամ, իբրև առանձին գիտակարգի: (научная дисциплина) անուն, չկար հրապարակում: Այս պայմաններում Հայաստանի տնտեսական զարգացման պատմությանը վերաբերող տվյալների ծրագրած, սխալեմատիկ ու համապարփակ ուսումնասիրության մասին խոսք ել չեր կարող լինել: Առանձին նյութեր, ի հարկ ե, շոշափվում ելին, բայց շոշափվում ելին ի միջի այլոց, Հայաստանի տնտեսական զարգացման պատմության ինքնակա առարկա լինելու նկատառումից անկախ: Վերջնիս գաղափարի բացակայության գեպքում զարմանալի չի կարող թվալ նաև այն, վոր անտեսվել են Հայաստանում յեղած գների պատմությանը վերաբերող նյութերի հավաքումն ու մշակումն ել: Սակայն հիմա, յերբ հայագիտության դուռը բաղկառում ե նորածին գիտակարգը, ժամանակ ե ձեռք զարկելու նաև այն նյութերին, վորոնք ատաղձ կարող են դառնալ Հայաստանում յեղած գների պատմության համար ել:

II

Այս տեսակետից բավական նյութ մատակարարում էն նաև հայ վիճական արձանագրությունները:

Սրանց հաղորդածները կարելի յեւ բաժանել յերկու կարգի. անմիջական ու միջնորդական տեղեկություններ։ Անմիջականը նրանք են, յերբ

<sup>1)</sup> «Русский рубль XVI—XVIII в. Опыт определения меновой стоимости старицкого рубля по хлебным ценам (Материалы для истории цен)». Членство в В. О. Ключевский «Опыты и исследования» № 1919, том I, Петроград, 1919, № 107—183.

վիմարձանագրությունն ուղղակի ասում ե, թե այս ինչ կայքն, ապրանքը կամ արդյունքն արժե այսքան ու այսքան փող. Արձանագրությունների՝ զների մասին հաղորդած այսպիսի անմիջական տեղեկությունները գդրախտաբար խիստ սահմանափակ են: Հաղարափոր արձանագրությունների մեջ նրանց թիվը հազիվ հասնում ե մի յերկու տասնյակի, մի թիվ, զոր ինչքան ել արժողություն ունենա, զողորմելի յե յուր քանակով: Անմիջական տեղեկությունների այս սակավությունը հարկադրում է զորոնելու միջնորդական ցուցմունքներ, այսինքն այնպիսի տեղեկություններ, զորոնք ուղղակի չեն ասում զները, բայց զորոնց վերլուծումից կարելի յե արժանահագատ յեղակացություններ անել զների մասին:

Կան արդյոք վիճարձանագրությունների մեջ միջնորդական տեղեկություններ գների վերաբերյալ:

**U. S. A.,** **the** **United** **States:**

Այս միջնորդական տեղեկությունների մասին անդրանիկ կոսահումն ունեցել ենք 1920 թվականի մոտերքը, յերբ մեր աշխատանքների միջոցին կանգ եյինք առել եղմիածնի միարան Ստեփանոս վարդապետ Միհիթարյանի (մականուն՝ «Արարո») «Ստորագրություն հոչակավոր մեծի ուժին Այրի վանաց սրբոյն Գեղարդայ» գրքի վրա, զոր լույս և տեսել 1873 թվականին: Մը մեջ բերված վիմարձանագրությունները կարգալիս մի վայրկան մեր մտքով անցավ, զոր կարծես թե հավատացյալների կողմից վանքին նվիրած փողային գումարների ու սրանց դիմաց խոսացված ժամապատարագների միջև վորոշ համապատասխանություն կա. թվաց, զոր արձանագրված ժամապատարագների քանակը վոչ թե մի անկախութեալ հական յերկութեան, այլ կախումն ունի նվիրած փողային գումարների, այն եւ ժամուցների չափից: Ուրիշ խոսքով՝ կասկած ծագեց, թե չկինք ժամապատարագների վորոշ սակագին ե յեղել միջնագարյան չափատանում:

Յիթե ճշտվեր այս կոսհումն, ապա կոշանակեր, փոր գտնված ե մի բանալի, վորով կարելի յեր զների պատմության համար ողտագործել այն բոլոր վիմարձանազրությունները, վորոնք թեյև անմիջական տեղեկություններ չեն տալիս զների մասին, բայց հազորդում են, թե Նվիրած այս կայքի, ապրանքի կամ արդյունքի գիմաց վանքը խոստացել է նվիրատուի կամ նրա ցանկացած անձի արեշտության, մեղքի թողության ու հոգու փրկության համար այսքան ժամ կամ պատարագ անել: Գները վերականգնելու համար բավական եր ժամ-պատարագների թիվը բազմապատկել նրանց սակագնով, և ահա կունենայինք նվիրած կայքի, ապրանքի կամ արդյունքի գինը: Յենթագրենք, թե մի հավատացյալ նվիրել է վանքին մեկ այգի, և փոխարենը խոստացել են կատարել տարեկան յերկու պատարագ: Յեթե պարզվեր, փոր ժամ-պատարագի սակագինը յեղել է, որինակ, 10 արծաթ, ապա յերկու պատարագանոց այգին պետք է արժեցած լինի  $2 \times 10 = 20$  արծաթ: Սակագինը գտնելուց հետո վիմարձանազրությունների մեջ հիշատակված բոլոր հոգեսր ու հոգեշահ համարժեքները — ժամ-պատարագները կվերածվեյին սյութական, փողային համարժեքների: Այս պարագայում մենք զների պատմության համար կարող ենք նվիրատուի միայն հատ ու կենտ արձանագրություններն, այլ և ժամ-պատարագ-

ների կերպարանքի տակ միջնորդական տեղեկություններ տվող հարյուրավոր ու հարյուրավոր վիճականները:

Հետագա խուզարկությունները բարեբախտաբար հաստատեցին մեր կոահումը:

## III.

Այրի վանքի բոլոր արձանագրությունների համադրական ցանկը պարզեց անտարակույս, վոր այս մենաստանի համար իրոք յեղել և ժամապատարագների վորոշակի սակագին: Յերբ առաջին քայլն արված եր, մնում եր անել յերկրորդն, այն են նույն ստուգումը կատարել մյուս վանքերի վերաբերմամբ ել և ապա դիմել ընդհանրացման՝ միջին սակագինը գտնելու նպատակով:

Սակայն սրա համար նախապես անհրաժեշտ եր յերկու պայման,

1. գծել ուսումնասիրվող ժամանակաշրջանի սահմաններն ու

2. պարզել այն գարերի «գների մասշտաբը»:

Պետք ե ասել, վոր վիթխարի մեծամասնությունն այն արձանագրությունների, վորոնք նյութեր են տալիս ժամապատարագների սակագինը պարզելու համար, դժբախտաբար անթվական են: Սրանցից միայն յոթ հատը տարեթիվ ունեն՝ զրված լինելով 1242, 1253, 1269, 1271, 1286, 1293 ու 1312 թվականներին, այսինքն XIII ու XIV դարերում: Այս հարյուրամյակները համարում ենք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերջին սահման այս ծայրից: XV դարն ընդհանուր առմամբ գուրս ե մնում այս ժամանակաշրջանից, վորովհետև նախընթաց գարերում գործածական փողերի—դահեկանի ու «գրամի»—փոխարեն այս դարում հանդես ե գալիս փողային մի նոր միտավոր—թանգառն կամ թանկառն, <sup>1)</sup> վորի հիշատակությունը չենք գտնում մեզ նյութ տվող արձանագրությունների մեջ: Հետո, մեծամասնությունն այն վանքերի, վորոնց արձանագրությունները մեզ կուվան են յեղել, հիմնված ե X դարից այս կողմէ:<sup>2)</sup>

1) Е. А. Пахомов «Монетные клады Азербайджана и Закавказья», Баку, 1926 № 30 ու 35:

2) Այն վանքերը, վորոնց արձանագրությունների մեջ փողով ստացած ժամապատիքների ներք գտել, սրանք են.

1. Այրի վանք,

2. Արջոց ու Սահմաննոս,

3. Արգաքանի Նեղոսի ու Ածածին,

4. Բագնայր,

5. Գոշավանք,

6. Գաեղի Բարձրաքաշ

7. Թամանատ,

15. Չորսում:

8. Կեչառիս,

9. Հաղբատ,

10. Հաւուց թառ,

11. Հոռոմայր,

12. Հոռոմոն,

13. Մակարայ վանք,

14. Նորագանք ու

Այս հիման վրա X դարը ճանաչում ենք ժամանակաշրջանի սահմանայն ծայրից: Այսպիսով պայմանաբար, մինչեւ ժամանակաբանական նորանոր ձգումները, մենք ընդունում ենք, վոր մեզ նյութ տվող արձանագրությունները վերաբերում են X–XIV դարերին: միջնադարի յերկրորդ հինգհարյուրամյակին կամ ընդհանրապես ասած՝ ուշ միջնադարին:

Այսուհետեւ, արձանագրությունների մեջ զրանցված փոխանակային ակտերի փողային բեկում փողի միավորը միշտ միենույնը չե: Ժամապատարագների դիմաց զրված են յերբեմն դահեկան, մերթ «զրամ» ու այլ անգամ ել՝ «սպիտակ»: Ընդհանուր յեղակացություն անելու համար անհրաժեշտ եր բոլոր գումարները մեկ փողային միավորով արտահայտել այսինքն բոլորը դարձնել դահեկան և կամ թե «զրամ» կամ «սպիտակ»: Դահեկանը «զրամի» կամ «սպիտակի» վերածելու և կամ թե, ընդհակառակը, «զրամը» կամ «սպիտակը» գահեկան անելու համար հարկավոր եր պարզել սրանց տեսակներն ու հարաբերություններն, այսինքն այն, թե գործող փողային սիստեմի մեջ քանի՞ տեսակ դահեկաններ, «զրամներ» ու «սպիտակներ» կային և թե դահեկանը քանի՞ «զրամ» կամ «սպիտակ» ուներ: Քաղաքատնտեսական տերմինով ասած այս ե հենց «գների մասշտաբը», վոր պետք եր վորոշել մեր վիմարձանագրությունների ժամանակաշրջանի սահմանները նշանաձողելուց հետո:

## IV.

Հայաստանի մեջ ուշ միջնադարում գործող փողերի ուսումնասիրությունը գեռ շատ անմիթարական վիճակի մեջ ե, և հետազոտողն ստիպված և ափլիքելով առաջ գնալու: Հատկապես տնտեսագետի գրությունը զըժվարանում ե մանավանդ այն հանգամանքի շնորհիվ, վոր մեր զրամագիտությունը շարունակում ե հնագրական ու հնագիտական, քան տնտեսագիտական զբանագիտություն լինել: Այս պատճառով ել ուշ միջնադարի «գների մասշտաբի» հարցը մենք այսեղ շոշափում ենք լոկ ընդհանուր գծերով:

Նախ դահեկանի մասին:<sup>1)</sup>

Այն դարերում շրջանառության մեջ յեղած փողի փողը դահեկանն ե,

<sup>1)</sup> Գիտակցարար մոնղոլական արծաթ դահեկանի մասին չենք խոսում, վորովհետև արելագետների մեջ այս հարցի վերաբերմամբ հիմնական տարածայնություն կա: Այսպիսով, մինչդեռ Համբեր–Purgstall–ը կարծում ե, վոր մոնղոլական դահեկանը 3 մսիարանոց վոսկի ե, Վարարուղը նույնը համարում ե 3 մսիարանոց արծաթ փող: Լե–Սարենցի կարծիքով մոնղոլական դինարը վոսկի յել յեղել, այն ել «թերևս անվանական կամ միայն հաղպատկությունը կարգի փողը»: (Վ. Բարտոլդ՝ «Պերսիդական մետաղական արծաթայի մասին» հայոց արծաթայի մասին պատմություն, 1886), վոր խիստ հնացած ե, թեյի ունի վանքերի հիմնադրության ժամանակաբան մի ցանկ բայց այս թերի ե և զարաթվերի սիսակներ ունի (տես նույն գիրք, եջ 98–99):

գեղանը, կարմիր գահեկանը կամ սոսկ «կարմիրը»<sup>1</sup> Դահեկանն ունի յերկու գլխավոր տեսակ. ա) մի գահեկան, զոր սենք պայմանաբար կանվանք մեծ դահեկան ու թ) մի այլ գահեկան, զոր Միթթար Գոշի «Դատաստանագրքի» մեջ կոչվում է «պօպատ» կամ «պօտատ» գահեկան:

Ի՞նչ բան ե այս «պօպատը»:

Գոշի «Դատաստանագրքի» հրատարակիչ Վ. Բաստամյանն այս առթիվ գրում եր.

«Պօտատ կամ պաւպատ՝ անհասկանալի բառ. թերևս պետք ե լինի պողպատ, թեավետ պողպատից դրամ երեք չեն շինում... Զեռագրներից ևս հավաքած ունեմ բավական տեղեկություններ հայոց չափերի, կշիռների ու դրամների մասին... Բայց դոցա մեջ ևս չէ պատահած պօտատ կամ պաւպատ և կամ պողպատ դրամ»<sup>2</sup>

1880 թվականին Բաստամյանը կարող եր այս տողերը գրել՝ կասկածի յենթարկելով պօտատ ու պօտատ դրամանունները: Իսկ հիմա, յերք վաղուց արդեն հրատարակված է Հրաչեա Աճառյանի «Ցուցակը հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանին ի Կարբին», այլ ևս անհնարին և նույն անել Անհնարին ե, զորովհետեւ Սանասարյանի № 1 Զեռագրի հիշատակագրությունները, վորոնց մասին Տաշյանը գրել ե, թե «զեշ գրված և դժվարնթենալի ու սիսալագիր, բայց համենայն գեղս հին, և կերեայ թե թորթումն են»,<sup>3</sup>— նույնպես պահել են այս դրամանունը մի քանի փոփոխակներով:

«Եպոխտիմու տամ ձ. պոտ»:

«Ճ. պոտատ, լուծ մ' եղ տայ»:

«Դ. պոտատ փողոցին արտին ենք տվել»:

«Զ. պաւպատ ի Նեղիկն ենք տվել»:

«Ե. պաւպատ ի Վասիլ ենք տվել»:

«Առաք Թ. պաւպատ»:

«Առի ՇԱ. պատատ»:<sup>4</sup>

«Թորթումի» այս հիշատակագրություններն ակներկ հաստատում են, թե Միթթար Գոշի «Դատաստանագրքի» հիշած պօտատ-պօտատ անունը փողն իսկապես յեղել ե:

Վերն ե այս:

Մեր կարծիքով «պօտատ» դեկանի՝ կես զար անլոյծ մնացած հարցը հիմնովին լուսաբանվում է Ամբատ Գունդուտարի «Դատաստանագրքով», Յերբ քրիստոնեյի արնագինը վորոշելու նպատակով գրում ե.

«Գին արեան մարդոյն... ի զեպ կարծիմ երեք հարյուր վաթուն և չինդ լինել զին գահեկանի, վոսկի գահեկան»,<sup>5</sup>—

<sup>1</sup> «Խանեկան յաղագա անախտ բնաթեան ունկոյն խորհուրդ և աստվածութեան բրիստոսի»: Միթթար Գոշ «Դատաստանագրք», Վաղարշապատ, 1880, Ա, ձ, եջ 287:

<sup>2</sup> Գոշ «Դատաստանագրք», եջ 372, ձանոթ, 794:

<sup>3</sup> Հակովոս վ. Տաշյան «Հայ բնակչությունը Աև ծովեն մինչեւ Կարբին», Վիեննա, 1921, եջ 66:

<sup>4</sup> «Հանդես Ամսորյա», Վիեննա, 1896, թիվ 1, հունվար, եջ 24—25:

<sup>5</sup> Գոշ «Դատաստանագրք», Բ, ա, 307—8:

Պունդստարլը սրա զիմաց զրում է՝ արնագնի գումարը փոփոխելով. «Բնդհանուր զին արեան քրիստոնէին 300 գեկան պերպեռատ է»:<sup>1</sup>

Պունդստարլի «պերպեռատը», կասկած չկա, բիւզանդական այն վուկի փողն ե, զոր ծանոթ է յըրըօրում սիւ Բյանտիում, սրըրըս կամ սոսկ եսան բեսան (=բիւզանդ կամ բիւզանդ) անուններով:<sup>2</sup> Այս յըրըօրում սրըրըս-բեսան վոսկին է հենց, զոր գարձել է պերպեռատ (=իպերպեռատ), ապա հավանորեն պեպատ (=պերպեռատ), հետո հավաստի պոպատ—պօպատ—պաւպատ ու ամենից վերջն ել պոտատ—պօտատ—պատատ՝ ամենինին կապ չունենալով պողպատ մետաղի անվան հետ:

Գոշի «Դատաստանագրքը» հաղորդում ե մի ուրիշ հետաքրքրական մանրամասնություն ել, այն ե թե՝ արժեքային ինչ հարաբերություն կար մեծ գահեկանի ու իպերպեռ գահեկանի միջև:

«Ոսկի գեկանն վեց զանգ է, պօպատ գեկանն երեք զանգ»:<sup>3</sup>

Այստեղ դանգը, զոր կշուաքարի անուն ե, փող չե, այլ միայն քանակական թվական, զոր համար հեր 1/10-ի գաղափարին, իսկ հետո նշանակել սկսեց 1/6 միայն: Ինչպես իրավամբ յեղրակացրել ե Բաստամյանը,<sup>4</sup> «Դատաստանագրիքն» ուղում ե ասել, թե պոպատ գահեկանը մեծ գահեկանի ուղիղ կեսն ե, և ուրիշ վոչինչ:<sup>5</sup>

## V.

Ի՞նչ հարաբերություն կար այս վոսկի գահեկանների ու ժամանակի արձաթ փողերի միջև:

<sup>1</sup> Ամբատ Գունդստարլ «Դատաստանագրք», հրատ. Արևեն Վ. Ղամճան, Եջմիածին, 1918, հոդ. Ա, եջ 17:

<sup>2</sup> Յ. Բարտոլդ «Պերսկա համար» անունը մասին է: Աւ միջնադարում շրջան գործող բազմատեսակ վոսկիների կշուաքին ու արժեքային հարաբերությունների ընդհանուր ու մոտավոր սիմեմ կարելի յե ընդունել այս շղթան 8/8: 7/8: 6/8: 4/8: 3/8: 2/8: թաս գործում 8/8-ը «մեծ» զահեկանն ե, իսկ 4/8-ը՝ բիւզանդ իպերպեռը: Յերբ Ալիշանը հասովմական վոսկին զնանառում է 25 ֆրանկ, լինի 7 գրամանոց վոսկին 21 ֆրանկ, իսկ պերպեռատը՝ 12 ֆրանկ, ապա նա ընդհանուր առմամբ համառում ե մեծ զահեկանի ու իպերպեռի 2:1 հարաբերությունը, զոր նշել ե Գոշի «Դատաստանագրք»: Հաս Ալիշանի պերպեռատին հավասարաթեր ելին շատ վոսկիներ—բիւզանդ սառակինն, առող բիւզանդը («սուրբի»), խաչակրաց (Աքիայի) փլորինը, բուն Ֆլորենտիայի փլորինը, վենետիկի գուկատը կամ ծեզզինը ե Ռուբենյան կոստանդնի վոսկին, իսկ Անտիոքի գեկանը հիշյաների կեսին եր հավասար (բանելով ուրիմ շղթայի մեջ 2/8-ի տեղի): Տիւնը «Սիսուան», 378—379: Վերջնին արժեքային հարաբերության մասին «Անտիոքի անսիգն» կարում է հետում ենք. «Տայ ի զարպան զեկան անսաքցի (Անտիոքի Թ. Ա.), որ կու անէ ե՛մ, կարմիր սուրբի» («Assises d'Antioche», Venise, 1886, եջ 31): Յեթե կարմիր «սուրբին» հավասար եր իպերպեռին, ապա նշանակում է, զոր Անտիոքի իպերպեռի 1/2-ն եր կամ թե «մեծ» զահեկանի 1/4-ը:

<sup>3</sup> Գոշ «Դատաստանագրք», եջ 372, ձանոթ, 794:

<sup>4</sup> Ինչպես ասացինք, այս ԱՎ գլխում մեր խոսքը վոսկի զահեկանի յերկու գլխավոր տեսակների մասին է: Աւ միջնադարում շրջան գործող բազմատեսակ վոսկիների կշուաքին ու արժեքային հարաբերությունների ընդհանուր ու մոտավոր սիմեմ կարելի յե ընդունել այս շղթան 8/8: 7/8: 6/8: 4/8: 3/8: 2/8: թաս գործում 8/8-ը «մեծ» զահեկանն ե, իսկ 4/8-ը՝ բիւզանդ իպերպեռը: Յերբ Ալիշանը հասովմական վոսկին զնանառում է 25 ֆրանկ, լինի 7 գրամանոց վոսկին 21 ֆրանկ, իսկ պերպեռատը՝ 12 ֆրանկ, ապա նա ընդհանուր առմամբ համառում ե մեծ զահեկանի ու իպերպեռի 2:1 հարաբերությունը, զոր նշել ե Գոշի «Դատաստանագրք»: Հաս Ալիշանի պերպեռատին հավասարաթեր ելին շատ վոսկիներ—բիւզանդ սառակինն, առող բիւզանդը («սուրբի»), խաչակրաց (Աքիայի) փլորինը, բուն Ֆլորենտիայի փլորինը, վենետիկի գուկատը կամ ծեզզինը ե Ռուբենյան կոստանդնի վոսկին, իսկ Անտիոքի գեկանը հիշյաների կեսին եր հավասար (բանելով ուրիմ շղթայի մեջ 2/8-ի տեղի): Տիւնը «Սիսուան», 378—379: Վերջնին արժեքային հարաբերության մասին «Անտիոքի անսիգն» կարում է հետում էնք. «Տայ ի զարպան զեկան անսաքցի (Անտիոքի Թ. Ա.), որ կու անէ ե՛մ, կարմիր սուրբի» («Assises d'Antioche», Venise, 1886, եջ 31): Յեթե կարմիր «սուրբին» հավասար եր իպերպեռին, ապա նշանակում է, զոր Անտիոքի իպերպեռի 1/2-ն եր կամ թե «մեծ» զահեկանի 1/4-ը:

Գոշն ասում ե.

«Ուսկի դահեկան, որ լինի երեքտասահն դրամ արծաթը ըստ ժամանակի վարժման»:<sup>1</sup>

Խոսքն անշուշտ մեծ դահեկանի մասին ե և վոչ թէ պօպատի: Հստ այսմ XII դարի վերջերին մեծ դահեկանի վարումը (կուրս) 13 «դրամ» եր, և վերջինս արծաթը փող եր: Վորովհետեւ պօպատ դահեկանը մեծ դահեկանի կեսն եր, տպա նշանակում ե, վոր պոպատի կամ բիզանդ իպերպերի վարումը կիներ 6<sup>1/2</sup> դահեկան: Կորպացներով կարելի ե ասել, վոր մեծ դահեկանի վարումը 12 «դրամ» եր, իսկ բիզանդինը՝ 6 «դրամ»:

Ստեփաննոս Որբելյանից իմանում ենք, վոր XIII. գարում դահեկանի վարումը փոխվել եր:

«Ծախեցին մեզ զխաչն թոռունքն աւագ Դիենեանց... և առին ի մէնջ զգինն լիով և անթերի հինգ հարիւր դահեկան, որ լինի 5.000 դրամ»:<sup>2</sup>

Դահեկանն արդեն դարձել եր 10 դրամ: Նկատի ունենալով, վոր ուշ միջնադարում արծաթը փողի—«դրամի» կշուի անկումն անհերքերի իրողություն ե,<sup>3</sup> պետք ե ընդունել, վոր Որբելյանի ժամանակվա «դրամն» արելի փոքրարժեք եր, քան Գոշի ժամանակվանը: Գոշի ասած մեծ դահեկանը, վոր անում եր 13 դրամ, այն ել մեծակշիռ դրամ, չեր կարող Որբելյանի ժամանակ անել 10 դրամ, այն ել թեթեվակշիռ դրամ: Մնում ե ընդունել, վոր Որբելյանի ասած ու 10 թեթեւակշիռ դրամ ունեցող դահեկանը Գոշի 6<sup>1/2</sup> ծանրակշիռ դրամ ունեցող դահեկանն ե կամ բիզանդական իպերպերը: Յեթե այս այսպես ե, տպա ուրեմն Որբելյանի ժամանակ մեծ դահեկանը կարժենար դարձյալ իպերպերից յերկու անդամ ավելի, այն ե՝ 2×10=20 դրամ:

Հստ կուլշերի՝ այս ժամանակաշրջանում Յերոպայի մեջ միջազգային առեստի ասպարիզում զիխավոր վոսկեստակը (զօլոտայ մոնետ, Goldmünze) բիզանդական իպերպերն եր, իսկ արծաթն՝ արարական դիրհեմը:<sup>4</sup> Յերբ գրությունն այսպես եր հեռավոր Յերոպայում, նույն ավելի հավաստի պետք ե ընդունել մանավանդ Հայաստանի նկատմամբ, Հայաստանի, վորի մի մասը բիզանդացոց ձեռքին եր հենց, իսկ մյուս մասն՝ արարաների, հետո ել մոնղոլների: (Վերջիններիս ժամանակ արարական «դրամի» տեղը բռնում ե մոնղոլական «դրամը»:)

Վերոգրյալի համաձայն ավելի հիմնավոր կինի ընդունել, վոր մեր վիմական արձանագրությունների մեջ հիշված դահեկանը վոչ թէ մեծ դահեկանն ե, այլ բիզանդ իպերպերը: Պայմանաբար համարելով, վոր մեզ նյութ տվող արձանագրություններն ավելի շուտ պատկանում են XIII—XIV դարերին, քան X—XII, մենք դահեկանի ու դրամի հարաբերությունը հաշվել ենք ըստ Որբելյանի, այն ե՝ դահեկանը=10 «դրամ» կամ թէ դրամը=<sup>1/10</sup> դահեկան:

<sup>1</sup> Գոշ «Դատաստանագիրը», Բ, ա, 309:

<sup>2</sup> Ստեփաննոս Որբելյան «Պատմութիւն նահանգին Սիսական», Պուկաս. մատեն. Դ. Թիֆլիս, 1911, գլ. ՀԱ, Էջ 488:

<sup>3</sup> Պահոմով «Մոնետնե կլած», 35:

\* Կուլիշը «Լեկցիոն», I, 77:

## VI.

Վերջապես գանք այն փողին, վոր կոչվել ե «սպիտակ»:<sup>1</sup>

Դեռ ևս Ղուկաս ինձիցյանն այն կարծիքն է հայտնել, թէ «սպիտակն» արծաթ փող եր:<sup>2</sup> Ալիշանն ասում ե, թէ կիպրոսի վուկին կոչվում եր սպիտակ<sup>3</sup> և թէ ըստ Բելոկողովու՝ Թավրիզն ել ուներ յուր սպիտակը (aspre), վոր հավասար եր Թավրիզի վոսկու 1/6-ին:<sup>4</sup>

Վոր «սպիտակն» սկզբնապես արծաթ փող եր, այս մասին վոչ մի կասկած չի կարող լինել: Յեթե չասենք բոլոր, ապա բազմաթիվ աղքերի մեջ փոխանակ ասելու արծաթ փող, ասել են սպիտակ փող: Հռովայեցիք ու բիւզանդացիք ունեյին իրենց արծաթ փողը asperoli, asperi, aspra, aspre—սպիտակ, իտալացոց մեջ նույնի անունն եր bianca—սպիտակ: Գերմանացիք արծաթ պիենսիկին ասել են Weiss-pfennige—սպիտակ պիենսիկի: Ֆրանսացիք արծաթ փողին ասել են blanc—սպիտակ: Բոհեմիայում արծաթ պիենիազը կոչվել ե penniez bjely—սպիտակ պիենիազ: Ավստրիական վենդերը պիենիկին ասում են belizch—բելիչ—սպիտակ: Ռուսաց մեջ սերեբրենիկ արծաթ փողին հոմանիշ գործ ե ածվել ելեկա—սպիտակ: Մինզրելները հուսմանից գործ ե ածվել ելեկա—սպիտակ: Մինզրելները հուսման արծաթ փողին ասելով՝ սովորել են և այժմ ել ընդհանրապես փողին ասում են tetari—սպիտակ: Զաղաթայերեն տեղի նշանակում ե թէ սպիտակ գույն ու թէ արծաթ փող:<sup>5</sup> Թուրքերեն հուսման արծաթ փողն անվանվում եր աղչե, աղչա—սպիտակ: Վերջապես հիշենք մեզ ամենից մոտիկ որինակը. տաճկահայերն արծաթ մեջիդիեյին ասում եյին ճերմակ մեջիդիյեյ կամ սոսկ՝ ճերմակ:<sup>6</sup>

«Արծաթն, —ասել ե կարլ Մաքսը, —տրտացոլում ե լույսի բոլոր ճա-

<sup>1</sup> Մեր վիմարձանագրությունների մեջ ամենուրեք զրկում ե սոսկ «սպիտակ»: Միայն Խորակերտի արձանագրության մեջ կարդում ենք. «գնեցի... ի կմ. սպիտակ սուլանի» («Վիմական», արձ. 1252 ե, Էջ 97): Այս շեշտը, թե այդին գնված ե սուլանի սպիտակով, ապացուց կարող ե ընդունվել, վոր վերջինս տարբերվում եր սովորական «սպիտակից»:

<sup>2</sup> «Հնախալութիւն Հայաստանեաց», հատոր Ա, Վանեալի, 1835, Էջ 242:

<sup>3</sup> «Միսուան», 379:

<sup>4</sup> «Միսուան», 384:

<sup>5</sup> В. Святловский, «Происхождение денег и денежные знаки», Москва—Петропавловск, 1923, Էջ 79, 81, 82: Միավում ե մեր անվանի իպվարան Հը. Անայանը, յերբ սատկառն իրավամբ ծագեցներով սպիտակ բառից՝ վերջինիս մասին զրում ե. «կազմած և բարգմանաբար թիք. ազն ասուակ», չաղաթ. այսոյակամ արծաթ զրամ» բառն (թիք. ազ սպիտակ): «Հայերեն Գավառական Բառարան», Թիֆլիս, 1913, Էջ 985: Ինչպես վերեկ որինակները ցույց են տալիս, արծաթ մետաղի ու սպիտակ գույնի գաղափարների զուգորդությունը համատարած յերեսութ ե: Ավելացնենք, վոր թէ Հյունքյարպեյենայանի «սոսկ=սպիտակ» (մաքուր) սոսուզանությունն ունի զեռ և ինձիցյանը. «Ուրեք որեք ի մերոց յիշալարիկ սպիտակ անուն զրամ, յորմէ և կամ ի ձայնէս յատակ ածանցեալ ե բատակ անունն յաշալարիկ բարբառ մել»:

<sup>6</sup> Դարձյալ Անայանը կարծում ե («Գավառական Բառարան», 711—712), թէ ճերմակ մեջիդիյեյին սոսկ ճերմակ ասելը ծածկալեզզի գարձափաք ե: Այս ել ընդունելի չի: Ճիշտ այն մտանությամբ, վորով պատկերն արծաթ գողին ասել են «սպիտակ», թոռներն ել ասում են «ճերմակ»:

ուսպայթներն իրենց սկզբնական միախառնությամբ (այսինքն՝ իրրե սպիտակ գույն, Թ. Ա.), վոսկին՝ գույնի բարձրագույն լարումը միայն, կարմիր երանգը: Իսկ գույների զգայությունը գեղագիտական զգայության ամենաժղովրդական ձևն է: Հնդկերոպական տարրեր լեզուների մեջ ազնիվ մետաղների անունների ստուգաբանական կախումը գույնից ապացուցել է Յակոբ Գրիմմը:<sup>1</sup>

Այդ, յիթե սպիտակ գույնի ու արծաթ մետաղի զաղափառների զուգորդությունը գրեթե համամարդկային յերեսույթ է, յիթե մեր «սպիտակն» արծաթ փող եր, և տարածված արծաթ փողն ել թէ Արևմուտքում ու թէ Արևելքում «զրամ»-դիրհմեն եր, ապա անվիճելի պիտի համարել, վոր մեր վիմարձանագրությունների հիշած «սպիտակը» մի առանձին փող չէ, այլ հենց նույն արծաթ «զրամ»-դիրհմեն է, մեծ զահեկանի  $\frac{1}{12}$ -ից մինչեւ  $\frac{1}{20}$  մասը կամ թե բիզանդ գեկանի  $\frac{1}{6}$ -ից մինչեւ  $\frac{1}{10}$  մասը կիլոկիլայում «սպիտակին» համապատասխանում եր «թագվորին» կոչվածը, որն ըստ Բելոկոզյուն նույնպես հավասար եր բիզանդի  $\frac{1}{10}$ -ին:<sup>2</sup>

Վորովինեան «սպիտակն» ու «զրամ» նույնանում են, ուստի «սպիտակներն» ել զահեկան անելիս առաջնորդվել ենք Արքելյանի հիշած զարումով, ըստ վորի ընթացիկ զահեկանը, վոր իպերպեր գեկանն եր, ուներ 10 դրամ կամ վոր նույնն է, 10 «սպիտակը»:<sup>3</sup>

<sup>1</sup> Karl Marx „Zur Kritik“, 3-е Auflage, Stuttgart, 1909, Էջ 158, Կ. Маркс „К критике полит. экономии“, изд. „Московский Рабочий“, Москва, 1922, Էջ 155—156:

<sup>2</sup> Դ. Ալիշան «Սիսուան» Էջ 391,

<sup>3</sup> Նկատենք, վոր թէ զահեկան կամ զեկան, թէ «զրամ» ու թէ «սպիտակ» բառեր, կողեւերին չանեն քանակական թվական, վորոշ սոսակ (մոնетա, Münze) չեն նշանակում, այլ բնդանուրապես փող:

Որինակ, «համա զահեկան» և հուսուն ինձ մեկ ժամ («Վիմ», համերդ. արձ. 125, Էջ 243), «թագաւորն է, որ կարէ զեկան շինել» (Գունդասարլ, Ա., 16), «ոտոր ինձ զիսայ չաք զեկանո ինչչիք հանչաք մի ժամ» (նույն, Ճ՛մէ, 65), «ուզենայ զիր զեկանն» («Assises d'Antioche», Venise, 1876, Էջ 75):

«Եսու զիօն զրամ»... և համաստցին մեզ... պատարպել («Վիմ», համերդ. արձ. 147, Էջ 247), «որ զրամ քշան կամ զրամ հարթեն... զձեռք կարեն ի պական» (Գունդասարլ, Ճ՛մէ, 64), «ես ի սեփէ եմ ի յիմ զրամն» («Assises» 75):

«Ես ընծայ եկեղեցոյն սպիտակ և նախորա... և մեր սահմանեցար... պատարպն» («Վիմակն», համերդ. արձ. 77, Էջ 235); Խոկ «Թողի գամին հարկ... զսայլի սպիտակն» (նույն, արձ. 31, Էջ 226) կարելի յէ յերկու կերպ ել հասկանալ, կամ սայլանարկը յեզել և մեկ սպիտակ», և կամ թէ այս նշանակում և մի հարկ, վոր կոչվում էր «սայլի փող»: Սպիտակ» բառը փող պիտի համարնալ նաև նորագանիք 1275 թվականի արձանագրության մեջ ել, «իմ զիր է Տարսային իշխանիս... ու ինչ զեկեղեցին լինեցին խիշայ կու տայտք սպիտակի, այն իշխային փոխան զԱղազար Ըղերձեցին տուաք» («Վիմ», 149); Ուզում ենք այսպիսս. «ու ինչ զեկեղեցին լինեցին, ինիայ կու տայտք սպիտակի, ի այն խիլային փոխան զԱղազար Ըղերձեցին տուաք»: Խիլա արարերեն նշանակում և նվեր Տարսային մեջ առաջարկություն վոր փող ելին տալիս նվեր, այն յնկերի փոխարեն մի ճարա տվինք, վորի անունն և Աղազար Ըղերձեցի:

Արձանագրությունների (այլ և ձեռագրերի) մեջ «սպիտակ» բառի ամենազբությունն և ՍՊ. Կամ սՊ. Մեզ միայն մեկ արձանագրությունն և հայտնի, վորտեղ «սպիտակ» բառը համաստագրված է մենակ մի տառով — ու կամ ալ, զբով: Այսու թո-

## VII.

Ժամանակաշրջանի ու գոների մասշտաբից հարցերն ընդհանուր գծերով պարզելուց հետո կարող ենք արդեն անցնել մեր բուն նյութին — ժամատարագների գներին ու սակագնին:

Այս գները տալիս ենք ցանկերով:

Ցանկերի մեջ չենք մտցրել մի խումբ դեպքեր, յերբ նվիրատուները ժամապատարագ ստանալու նպատակով ընծայել են վոչ միայն փողային գումարներ, այլ և կայքեր, ապանքներ ու արդյունքներ, որինակ, այսքան զահեկան, «զրամ» կամ «սպիտակ» և այսքան եզ, այս ինչ այդին, այսչափ ավետարան կամ զիրք ել հետք: Այս զեպքերում փոխանակով արժեքները բարդ արժեքներ են, և մենք սովորական Փ—Ա. (փող-պարանք) հարաբերության փոխարեն ունենք (Փ+ա) — Ա. հարաբերություն, Յեվ գորգնետև բարդ արժեքների վոչ-փողային մասի (ա), այն և ապրանքային մասի գները մեզ հայտնի չեն, ուստի ամրող Փ+ա բենոի գումարն ել անորոշ ե, և սրանից անմիջական յեղակացություններ չի կարելի անել ժամապատարագի գնի կամ սակագնի մասին Այս հիմամբ սահպատ ենք յեղել մեր ցանկերից զուրու բարդ արժեքների պարունակող արձանագրությունները:

Այնուհետև կան այնպիսի արձանագրություններ, վորոնց փոխանակության ակտի փողային բենուր պարզ ե, բայց ժամապատարագների բենուությունը պարագան կա: Յերեխնի, որինակ, ժամապատարագների թիվը հիշած ե, բայց մի այնպիսի հավելումով, վոր հարցը նորից մթնում ե: Այսպիսի այս ու որինակ, թանահատի 1326 թ. արձանագրությունը. Աղլանափան նվիրում ե 100 զեկան, ատանում ե 1 պատարագ՝ «շաբաթն Զատկի»:<sup>1</sup> Այստեղ մենք զեգարացել ենք վորոշել թի արդյուր խոստացված և մեկ

<sup>1</sup> Նարեսի արձանագրությունն և Զժել=1266 թվականից. «..ծափեցաք... զմեր հայրենիք այգիս... զուքամուտ անպակաս առար... ով զատի անէ, տուգանք տայ ծ. զեկ... զահիակն են. ու ի պարտն և ծ. ալ. Շահնային ու Մեղանայիին»: (Կ. Կոստանյանց «Դիմական առարկիր»; Ա. Գետերը, 1913, Էջ 109): Այս մին արձանագրությունը մենք սովորություններով հասկանում ենք այսպիս. «ծափեցաք... զմեր հայրենիք այգիս... ԶՄԲՇ, սպիտակ» անպակաս առար... ով զատի անէ, տուգանք տայ ծ. զեկան... զահիակն ՅՀ. [սպիտակ] ի պատր[ս]են և ծ. [սպիտակ] շահեային ու տեղու նայի[ի]ին»: Այդին ծափեցաք և 3,200 սպիտակ: Ավ զագի անե, տուգանքն և 50 զեկան: Այսու զնի, այն և 3,200 սպիտակի զափիակն, այսինքն առանձին կամ զափիակն է պատրությունին և կամ հասկանին ապարագիրը և 50 սպիտակ ել շահնային (հարկանափարեն) ու տեղի նայիրին (պաշտոննայիին): Այս ուզումներով արձանագրությունը միանգամայն հասկանակի յի դառնումը յերեան հանելով տառածափի հետ կապված հարկի ու տուրքի խիստ հետաքրքրական զեպքերությունը կամ զափիակն ապարագիրը և կամ հայիրի մասին «Հաւաքարան անուանց կաթուզիկոսաց» հրատ. Մահոքը գ. Մարտունյան, Եղմիածին, 1916, Էջ 48—49. «Բանձամաթիլ մեծ նորուզ փաշէն զրեր է, ժե, զուսուշ շահեայ զափիակի մասին պարագան անպատագան տառապատագան ապարագիրը և զափիակի շինեցին շահնային շահեային ապարագիրին»:

<sup>2</sup> Ալիշան «Սիսուան», Վենետիկի, 1893, Էջ 122; «Վիմական», արձ. 1326թ, Էջ 162 արձանագրությունը կիսատ և բերգամ:

## 12 ԹԱԴ. Ա.ԴԱԼԲԵԳՅԱՆ—ՄԻ ԳԱՂՏՆԻՔ ՀԱՅ ՎԻՄԱԿ. ԱՐՁԱՆԱԳՐ. ՄԵՋ

պատարագ Զատկի շաբաթ որը, թե մեկական պատարագ Զատկի շաբաթվա—յոթնյակի—բոլոր որերում: Հիշենք նաև դեպքը Պոռշի, վորը Դսեղի Բարձրաքաշին նվիրել ե 45 դահեկան, և փոխարենը նրան խոստացված են «աւագ աւուրք»:<sup>1</sup> Թե քանի վոր պետք ե հաշվել այս «աւագ աւուրքը», վորոնք անշուշտ Զատկի «աւագ որերն» են, մնում ե անորոշ: Վերջապես թվենք Տիկին անունով կնոջ դեպքն ել, ոս դարձյալ Դսեղի Բարձրաքաշին տվել ե 50 դահեկան՝ ստանալով մեկ պատարագ «յամենայն եկեղեցիքս»:<sup>2</sup> Քանի եկեղեցում եր կատարվելու ժամ, անհայտ ե, ուստի և ժամ-պատարագի բենոի մեկ պատարագը գեռ հնարավորություն չի տալիս այս տիկնոջ—Տիկնի դեպքը ցանկի մեջ մտցնելու:

Մեր ձգտումն ե յեղել ոգտագործել վիմական արձանագրություններին նվիրված գրականության մեծագույն մասը: Քննության առնված են նվազագույն հաշվով մոտ յերկու եազար վիմարձանագրություն: Վոր մեր աշքից խուսափած կլինեն դեպքեր, թերեւս վոչ-յեղակի դեպքեր, այս համար նաև նամար պիտանի տեղեկություններ գտած չլինելով՝ ավելորդ ենք համարել մեկ մեջ համար պիտանի տեղեկություններ գտած չլինելով՝ ավելորդ ենք համարել մեկ մեջ թվել Սլիշանի ու այլոց այն բոլոր գրքերը, զորոց մեջ կան վիմական արձանագրություններ: Հստ հնարավորության համեմատված են այլիայլ աղբյուրների մեջ յեղած տարբեր ընդորինակումները: Այստեղ համառոտագրություններով մեջ ենք բերում այն աղբյուրները միայն, վորոնց մեջ փողով ստացված ժամ-պատարագների գներ ենք բերում այս աղբյուրները միայն, վորոնց մեջ փողով ստացված ժամ-պատարագների գներ ենք բերում այս աղբյուրների մեջ:

1. Գար. — Գարեգին եպիսկոպոս «Աղիզրեկենք ու նրանց շինարարական գործը»: Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի, գիրք Ա., և Բ. 1921—1922, Վաղարշապատ,

2. Էալ. — Յերվանդ Էալայան «Գեղարքունիք կամ Նոր-Բայազետի գաւառ», Թիֆլիս, թվական?: (Գիրքն եղերի անընդհատ թվագրություն չունի, մեր մատնանշած եղը «Սևան» գլխից ե.)

3. Մանկունի «Այրի վանք կամ Գեղարդայ վանք», Վաղարշապատ, 1871,

4. Միփք — Մտեփաննոս վարդ. Միփթարեանց «Ստորագրություն մեծի ուխտին Այրի վանաց սրբոյն Գեղարդայ», Վաղարշապատ, 1873,

5. Զալ. I ու II — Մարգիս վարդ. Զալալյան «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», մասն Ա., Տփիսիս, 1842, մասն Բ, Տփիսիս, 1858 ու.

6. Վիմ. — Կարապետ Կոստանյանց «Վիմական Տարիկիր», Ա. Պետերուրք, 1913:

Դեպքերից յուրաքանչյուրի վիմաց զրել ենք այն գլխավոր աղբյուրը միայն, վորը հիմք է ծառայել մեզ, զուգընթաց աղբյուրները չեն մատնանշված: Տախտակների ծանոթությունների մեջ տրված են կամ մեկնարանություններ և կամ թե ուղղումներ ըստ մեր ըմբռնման, վորոնց հիմ-

<sup>1</sup> Զալալյան, 1, 112: «Վիմական», արձ. 1247թ, էջ 91 արձանագրությունը թերի եւ,

<sup>2</sup> Զալալյան, 1, 110: «Վիմականը չունի:

նավորումը սակայն ստիպված դուրս ենք ձգել տեղի սղության պատճառով:<sup>1</sup> I ու II տախտակների մեջ վանքերի գարաթվերից առաջ դրված ե ու ատառերը ցույց են տալիս վանքի հիմնագրության (հ) կամ թե հնագույն արձանագրության (ա) դարը:

## VIII.

Ժամ-պատարագների գներին վերաբերող գեղքերն ու ավաները խմբել ենք չորս տախտակի մեջ: Սրանցից առաջնում մեջ են բերված 20 դահեկաննոց ժամ-պատարագների գեղքերը տարբեր վանքերում՝ սրանց այլընական կարգով՝ զնելով Այրի վանքը, վորն այս տեսակետից

<sup>1</sup> Այստեղ դնում ենք ուղղումներից մեկը միայն՝ ամենակարևորը: Մանկունին հաւոց թաղի արձանագրության մի հատվածը կարգացնել ե «գնեցաք զանձուան Զոշիկին որ բնի Ու. սպ.» (Մանկ. 50), վոր «Վիմ.» 136-ում բերված է անփոփոխ: Ալիշանը կարգում է «զանձուան (շ) Զոշիկին. Ու. սպիտակի» («Ալյարատ», Վենետիկ, 1890, էջ 355): Հարցականն Ալիշանին ե, վորն հավանութեն անընբարելի համարելով գուրս ե ձգել «որ քնի» բառերը: Մենք կարգում ենք «գնեցաք զանձուան, Զոշիկի նորթն ի Ու. սպիտակի»=«ասանձուան ու Զոշիկի նորթը գնեցինք 1,000 սպիտակի»: (Հմմտ. Զալ. 11, 33 «զՎարդինեցն որք ի Ա. Ածածինս», Ալիշան «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 117 ու «Վիմ.» 50 «զՎարդենց նորքն ի սպ. Ածածինս»: Ուղղելի «զՎարդենց Կորք»:— Զալ. 11, 44 «զՎարդինայն որ են ի սպ. Ածածինս», Ալիշան «Շիրակ» 120 «զՎարդենաց նորքն», «Վիմ.» 146 «զՎարդենաց նորքն»: Ուղղելի «զՎարդենց Կորք»:— Զալ. 11, 40 «հատու... զայրենիքն զնորոն ի մեր ուխտոս», Ալիշան «Շիրակ», 119, «Վիմ.» 105 «հատու... հայրենիքն զնորոն»: Ուղղելի «զԱնուան»:— «Վիմ.» 147 ու Զաքարիա սարկ. հատ. Գ. Վաղարշապատ, 1870, էջ 25. «գնեցաք զԱնուան կոյ նորքն»: Ուղղելի «զԱնուարակոյ նորքն»: Ուղղելի «զԱնուարակոյ Կորք»:— Զալ. 11, 29 «արկաք նորքաք», «Վիմ.» 101 գուրս ե ձգել այս բաներն արձանագրության միջից: Ալիշան «Շիրակ», 26 «սպիտաք նորք»: Ուղղելի «արկաք Կորք»: Ի՞նչ է նշանակում «նորք»: Այս բացատրում է «Զամբռը», Վաղարշապատ, 1873, էջ 186 «յորում Կորք մի և զրի... որ է կտոր մի այգի», նույն, էջ 164 «մեկ այգի է ունեցեած որ կոչի Կորք»: Հստ այսմ վերսի բոլոր նվերներն այգիներ են, և «արկաք նորք» նշանակում է «այգի ձգեցինքը»: (Զալ. 1, 38—39 ու 41 մեջ են բերված անիբ=1693 ու անկզ=1717 թվականների կարգածագրեր (Սահանի վանքի), վարտեղ մի քանի անզամ գործ և ածված «նորք»): Զգած այգին «Վիմ.» 94, 96, 100 կոչում է «Անեռատութիւն այգի», «Վիմ.» 158 «Անեռատութիւն այգին Կորակիւրա» (տպագծ և իրբե հատուկ անուն), վերջապես «Վիմ.» 103, Ստ Որբեկան, 361 ու Ալիշան «Սիսական», 189 ունեն «նորատունկ այգի»: Մեր բարպաներում այս իմաստով գործ ե ածվում սոսկ նորատունկ ու նորատունկ— Մուշ Արփաննունկ, Մուշ նորատունկ (Ամատունի Հայոց Բան ու Բան, Վաղարշապատ, 1912, էջ 10, ևած, ածեր, մատնարկ, նորատունկ, նորատունկ): Վանում վրազակի տարբերել են նորատունկն ու այգին. մեր նորատունկն ու իգին մնացե ասանց փորել» (Արփանակեն վրդ. Տեր-Արփաննուն «Պանոլ խալ Վանցին», Կ. Պոլիս, 1876, էջ 35): Հստ այսմ նորք=նորատունկ, նոր ձգած այգի, «ածեր»: Ինչպես շատ հասարակ անուններ, այնպես և այս նորատունկն ու նորքը հետագայում զանում են հատուկ անուններ, առաջինը՝ մարդու (հմմա. «յիշեցիք զՊալպար-սույիք բրիտոննեայքն... Աբրեհամ գարբին. Նորտունկն... Յայլարեկն»:— «Ալյարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1905, հուլիս-սու. էջ 729—730), յերկորդը՝ տեղի (Նորք զյուղ Շահապանքում, Ալիշան «Ալյարատ», 484—486, ըստ վարի այստեղից զալիմածները հիմնել են Ցերմանի նորք արփանակեն): Զուգանես եվլոյուցիան ունեցել ե նաև նորագիւտ (մատաղիք, մատաղիս) բառը, գոր նշանակում է նույնպես նորք, նորատունկ, մատնարկ, ածեր. «Վիմ.» 69 «տուի զՅանկարակուց երկիրն և Հակութիւնայ զիմ մատա ու ու «Վիմ.» 46. «արկի զԶոթացն այգին և զՄատաղին», ուղղելի «զմատաղին»: Արցանում հայտնի են Մատաղիս աւերակ զիւղ Խաչենում ու Մատաղիս շնոր զյուղ Զրաբերում (Մակար ևսո, Բարխուտարեան «Արցակ», Բագու, 1895, էջ 193 ու 231):

համառկ տեղ և դրավում բոլոր մենաստանների մեջ: (Տես Առաջին տախտակ, էջ 58–59)

Այս տախտակի թուոցիկ զննությունն անգամ համոզում ե, վոր սակագնի գոյությունն անհերքելի յէ: Այսքան զեպքերի նմանությունը չի կարելի սոսկ պատահականությամբ բացատրել:

Չկա սակագնի, վորից շեղումներ չինսեն զեպի վեր ու վար: Յերկրորդ տախտակը ցույց և տալիս ժամ-պատարագների այնպիսի զեպքեր (5 դահնեկանից մինչև 75 դահնեկան), վորոնք սակագնից անընդունակ շեղումներ են և կամ թե միջին սակագնից զանազանվող այլ կարգի սակագներ: (Տես Յերկրորդ տախտակ, էջ 60–61)

Առաջին ու յերկրորդ տախտակով սպառվում են ժամ-պատարագների գներ պարունակող բալոր զեպքերը, վոր հայտնի են մեզ:<sup>1</sup>

Յերրորդ տախտակը ցույց և տալիս, թե հիշտակված բոլոր զեպքերն ու ժամ-պատարագների գները բացարձակ ու տոկոսանիշ թվերով ի՞նչպես են բաշխված վանքերի միջև: (Տես Յերրորդ տախտակ, էջ 62):

Այս տախտակից յերեսում ե, վոր

ա) 1-ական զեպք ունեն Աղջոց ռ. Առեփաննոսը, Դսեղի Բարձրաքաշը, Կեչառիսը, Հաւուց Թառն ու Չորուաը, միասին 7,5<sup>0</sup>/<sub>0</sub>,

բ) 2-ական զեպք ունեն Արգաքանը, Բագնայը, Գոշավանքը, Հոռո-մայրը, Հոռոմոսն ու Նորավանքը, միասին 18<sup>0</sup>/<sub>0</sub>,

<sup>1</sup> Ի լրումն մեր ձեռքի տակ ունեցած զեպքերի պետք և տանը, վոր մինչև սոր սոսկումը շվանացաներ մեր ցանկերի մեջ մտցնել Մակարայ վանքի հետեւալ արձանագրությունն ել. «Էս վասակ իշխան... հասու ձիանելինայ. և հասուն զ. պատարագ»: (Զալայան, էջ 417): «Վիմականմ» (Հավերգած, արձ. 122, էջ 243) ապամած և «Զիահեկանայ», վորն իրեն հասուկ անուն զրված և տեղանունների ցանկի մեջ: Մեր կարծիքով պետք ե ուզզել այսպես. ևսու Զ. ԴԱՀԵԿԱՆԵ..., և հասուն զ (կամ. դ) պատարագ»: Տվել ե 80 դահնեկան, սոսցել 3 պատարագ, ժամագինը՝ 26 2/3 դահնեկան, կամ 4 պատարագ, ժամագինն ուղիղ 20 դահնեկան: Մեր ողջման վեմ ցլիավոր ասարկությունն այն կարող ե լինել թե արգարք հնապական տեսակից ընդունելի ե Դ-ու և ասաւերի ցիութման հայմանականությունը: Պատասխանը զրական է: Յեթև Դ-ասաի զլուիր լավ փալոտզված շինոն կամ փշանա, տասի մնացած մասը բարորդին սման կլինի և զրին: Դ-ասաի զլուիր յեթե կարճ և զծված լինում ձախ կողմից, տասն ելի շատ և մոտենաւմ ի զրին (հմտ. որդի բասի դ տասն Արտավագդ Մամիկոնյանի նախճագանի արձանագրության 4-րդ տողի մեջ): «Տորակաթ» ժողովածու, Վաղարշապատ, 1913. Գարեգին զ. Հովուիցան «Բարտեղ հայ հնապատության», տախտակ ե, № 10): Սակայն դ տասի զլուիր կարող ե պրանիյուն ել լինել. այս կերպ զծված ենք տեսնում Յերեսուրի արձանագրության 3-րդ տողամ գուստը բասի մեջ (նոյն զիրք, տախտակ ԺԲ, էջ 19): Այս վիճակում հիշյալ զիրք կարող ե բարորդին մոլորցնել ընդունակողին: Սրա փայլուն տպացույցն ե Սրցափի Գետաշեն ավանի եկեղեցու արձանագրության մի համաձք, վոր Բարխուսարյանն ընդունակել և «Ասովի սրդի, որ 1-ի Մելիք Օսեփին» աշ-վելացնելով: Անհաւանալի և... բասի իմաստն զոյցի, որ 1-ի = Ա. Մելիք-Ցովսեփին, (Մակար Ասո, Բարխուսարյանց՝ Արցափ, Բագու, 1895, էջ 265): Այն ինչ մեզ համար ակներե ե, վոր Բարխուսարյանցի ընդունակած «1-» նշանը զոչ այլ ինչ ե, բայց յեթե սրազում դ տասի: Ըսթերցումը սիստ ե, պետք ե կարգալ Ասովի սրդի, որդի Մելիք-Ցովսեփին, այսինքն Մելիք Ցովսեփի որդի Ասովի սրդի: Յերեսուրի ու Գետաշենի արձանագրությունների մեջ դ տասի զիրք կիծ, ինչպես վոր և փոքրաստա տպագրի մեջ: Յեթև սրանկան զլուիր անսեղանությունը կարգավոր պահպան պահպան պահիլ զիրք կիծ, ինչպես վոր և փոքրաստա տպագրի դ տասն, այս զեպքում կ ու կ զիրքի շփոթումը զիրքեւ անխուսափելի ե:

գ) 4-ական զեպք ունեն Թանահատն ու Մակարայ վահքը, միասին 12<sup>0</sup>/<sub>0</sub>,

դ) 5 զեպք ունի Հաղբատը՝ 7,5<sup>0</sup>/<sub>0</sub> հ

ե) 37 » » Ալլիվանքը մենակ՝ 55<sup>0</sup>/<sub>0</sub>:

Դասագործության մենական համար համարական:

ա) 1-ական զեպք են 8<sup>1</sup>/<sub>3</sub>, 9<sup>1</sup>/<sub>6</sub>, 12, 15, 16<sup>2</sup>/<sub>3</sub>, 33<sup>1</sup>/<sub>3</sub> ու 75 դահնեկան-նոց ժամերը՝ միասին 10<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>,

բ) 2-ական » » 5, 10, 30 դահնեկաննոցները՝ 9<sup>0</sup>/<sub>0</sub>,

շ) 4-ական » » 40 դահնեկաննոցները՝ 6<sup>0</sup>/<sub>0</sub>,

դ) 5-ական » » 25, 50 դահնեկաննոցները՝ 15<sup>0</sup>/<sub>0</sub> ու

ե) 40 » » 20 դահնեկաննոցները՝ 60<sup>0</sup>/<sub>0</sub>:

Յերրորդ տախտակի մեջ ամենից ուշագրավը հատեյալ իրողությունն ե: Դեպքերի մեջ ամենամեծ առկուսը՝ 60<sup>0</sup>/<sub>0</sub> կազմում են 20 դահնեկաննոցները: Սրանից ցած յեղածները, 5-ից մինչև 16<sup>2</sup>/<sub>3</sub> դահնեկաննոցները, կազմում են զեպքերի 13<sup>0</sup>/<sub>0</sub>-ն, իսկ 20-ից բարձրերը, 25-ից մինչև 75 դահնեկաննոցները, զեպքերի 27<sup>0</sup>/<sub>0</sub>-ն, այսինքն վերջիններս յերկու անգամ ավելի են, քան 20 դահնեկանից ցածը յեղած զեպքերը: Այս նշանակում ե, վոր ժամ-պատարագների գները յերբ շեղվում են 20 դահնեկանից, ավելի շատ զեպքի վեր են միտում, քան թիւ ցած:

Դերջապես չորրորդ տախտակը խմբում և փողային զումարներն ու ժամ-պատարագների քանակների ըստ վանքերի և հանում թե յուրաքանչյուր վանքի ու թիւ բոլոր վանքերի ժամ-պատարագների միջին սակագինը: (Տես Չորրորդ տախտակ, էջ 63):

Բառ միջին գների կունենանք այս շարքը.

I	ա) 9 <sup>1</sup> / <sub>6</sub> դահնեկան – Արգավանք՝ . . . . .	2 զեպք,
	բ) 15 <sup>1</sup> / <sub>4</sub> » Հաղբատ՝ . . . . .	
	գ) 16 <sup>2</sup> / <sub>3</sub> » Հոռոմայը՝ . . . . .	

II	դ) 20 դահնեկան – Աղջոց, Գոշավանք, Դսեղ, Չորս 5 դ.	51 զեպք 76 <sup>0</sup> / <sub>0</sub>
	ե) 21 <sup>4</sup> / <sub>5</sub> » Ալլիվանք՝ . . . . .	
	զ) 22 <sup>2</sup> / <sub>9</sub> » Թանահատ . . . . .	

III	ի) 25 » Հավուց Թառ, Մակարայ վանք 5 դ.	7 զեպք 10 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>0</sub>
	լ) 33 <sup>1</sup> / <sub>3</sub> » Կեչառիս . . . . .	
	մ) 35 » Հոռոմայ . . . . .	

IV	դ) 36 » Նորավանք . . . . .	2 զեպք 10 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>0</sub>
	ե) 45 » Բաղնայը . . . . .	
	ա) 55 զեպք 10 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>0</sub>	

Չորրորդ տախտակի ավյալների այս վերախմբումը յերեան և հանում այն իրողությունը, վոր 20 դահնեկանից ցած յեղած սակագնի զեպքերը կազմում են բոլոր զեպքերի 13<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ը, 25 դահնեկանից բարձր սակագնի գեպքերը՝ 10<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub> առկուս, իսկ 20–25 դահնեկան սակագներինը՝ 76<sup>0</sup>/<sub>0</sub>: Աւրիշ լուսությունը մասնաւում է զեպքերի 3/4-ից ավելին՝ զրոյացնելով հազիվ՝ 1-ը:

Այս բոլոր ավյալների վրա հիմնված՝ հանում և հատեյալ զեպքուր յեղածակացության:

ԱՐԱՋՆԱ ՎԻԴԻԼԻԿԵ		ԺԱՂԵ ՎՐԱՐ ԽՂՋ		ԳՐԱԼԱՆ ԱՂ-		ՎԱԲՈՐՈՒՐՅՈՒՆՈՒՄ	
ՀԵՐԱՐ ՎԱՆՔԻՆ ՀԱՐԱՐԱԾ		ՊԵՂ ԿԱՐԵ ՆԱՐԵԿ		ՌԵՎ ԱՂ- ՌԵՎԵԿ		ՎԱԲՈՐՈՒՐՅՈՒՆՈՒՄ	
16	ԺԲ-ԺՊ	ԱՅԻՆԻՆԿԱՐ	ՊԵՂ ԿԱՐԵ	ԳՐԱԼԱՆ ԱՂ- ՌԵՎԵԿ	ՎԱԲՈՐՈՒՐՅՈՒՆՈՒՄ	19	ԺԲ-ԺՊ
17	»	»	»	»	»	19	»
18	»	»	»	»	»	19	»
19	»	»	»	»	»	19	»
20	»	»	»	»	»	20	»
21	»	»	»	»	»	20	»
22	»	»	»	»	»	26	»
23	»	»	»	»	»	27	»
24	»	»	»	»	»	28	»
25	»	»	»	»	»	48-49	»
26	»	»	»	»	»	49	»
27	»	»	»	»	»	50	»
28	»	»	»	»	»	51	»
29	ԺՊ	»	»	»	»	51	»
30	ԺԲ	ԱՐԵՎԱՐ	»	»	»	178	»
31	ԺԲ-ԺՊ	ԳՐԱՀԱՆՔԻՆ	»	»	»	227	»
32	»	»	»	»	»	229	»
33	ԺԲ-ԺՊ	ՀԱԿԱՐԾԱՐԱՎ	»	»	»	116	»
34	ԺՊ-ԺՊ	ՓԱՀԱՆՀԱՄ	»	»	»	212	»
35	»	»	»	»	»	243	»
36	»	»	»	»	»	244	»
37	ԺԱ-ԺՊ	ՄԱՐԱՐ	»	»	»	244	»
38	»	»	»	»	»	»	»
39	»	»	»	»	»	»	»
40	ԺՊ-ԺՊ	ԳՐԱՀԱՆՔ	»	»	»	249	»

16	»	»	»	»	»	»	»
17	»	»	»	»	»	»	»
18	»	»	»	»	»	»	»
19	»	»	»	»	»	»	»
20	»	»	»	»	»	»	»
21	»	»	»	»	»	»	»
22	»	»	»	»	»	»	»
23	»	»	»	»	»	»	»
24	»	»	»	»	»	»	»
25	»	»	»	»	»	»	»
26	»	»	»	»	»	»	»
27	»	»	»	»	»	»	»
28	»	»	»	»	»	»	»
29	ԺՊ	ԱՐԵՎԱՐ	»	»	»	»	»
30	ԺԲ	ԳՐԱՀԱՆՔ	»	»	»	»	»
31	ԺԲ-ԺՊ	»	»	»	»	»	»
32	»	»	»	»	»	»	»
33	ԺԲ-ԺՊ	ԲԱԿԱՐԾԱՐԱՎ	»	»	»	»	»
34	ԺՊ-ԺՊ	ՓԱՀԱՆՀԱՄ	»	»	»	»	»
35	»	»	»	»	»	»	»
36	»	»	»	»	»	»	»
37	ԺԱ-ԺՊ	ՄԱՐԱՐ	»	»	»	»	»
38	»	»	»	»	»	»	»
39	»	»	»	»	»	»	»
40	ԺՊ-ԺՊ	ԳՐԱՀԱՆՔ	»	»	»	»	»



ՅԵՐԱՐԴԻ ՏԱԽՍԱԿ

ՀԱՅ ՎԻՃԵԼԻՆԴՎՈՒ	Արձանագրություններ		Վահագում կամ պահպատճենավայր				
	Վահագում կամ պահպատճենավայր	Վահագում կամ պահպատճենավայր					
41 ԺՌ-ԺՌ							
42	Ժ						
43	Ժ						
44	Ժ						
45	Ժ						
46	Ժ						
47	Ժ						
48	Ժ						
49	ԺՌ	2Ժ	1271	Արդաքանակ	աժք	Համապետական	100
50	ԺՌ-ԺՌ						
51	ԺՌ	ԽՂԱ	1242	Բազմանալր	հժ	Մանելուառագ	100
52	ԺՌ-ԺՌ						

Արձանագրություններ	Վահագում կամ պահպատճենավայր						
	Վահագում կամ պահպատճենավայր						
	Վահագում կամ պահպատճենավայր						
	Վահագում կամ պահպատճենավայր						
	Վահագում կամ պահպատճենավայր						

53 ԺՌ-ԺՌ							
54 ԺՌ-ԺՌ							
55 ԺՌ	9Ժ	1253					
56 Ժ-ԺՌ							
57	Ժ						
58	Ժ						
59	Ժ						
60	ԺՌ	2ԺԲ	1293	Հաւուց թասու	աժք	Վահագում կամ պահպատճենավայր	100
61	ԺՌ	2Ժ	1286	Հանունալու	աժք	Սահական	10
62	ԺԲ-ԺՌ						
63	ԺՌ	2ԺԸ	1269	Հանունալու	աժք	Թափառություն	150
64	Ժ-ԺՌ						
65	ԺՌ-ԺՌ						
66	ԺՌ	ՃՂԱ	1312	Եմությանը	հժ	Թափառություն	150
67	Ժ-ԺՌ						

ՎԱՐԴԱԲՈ	ՏԵՐՈՒԹՅՈՒՆ										ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ				
	5	8 <sup>1/3</sup>	9 <sup>1/6</sup>	10	12	15	16 <sup>2/3</sup>	20	25	30	33 <sup>1/3</sup>	40	50	75	
ա. Ալլիկ գլանք				1	1	1	1	29	2	1	1	1	1	37	55,0
բ. Ալլաց								1	1	1				1	1,5
շ. Ալլուսքան		1												2	3,0
զ. Բաղմանյու							2							2	3,0
է. Գորշանանք								1						2	3,0
դ. Ղուճղլի Բալգչուսքաշ								3	1					4	6,0
է. Թանահանտ									1					1	1,5
ը. Կիւսանիս										1				5	7,5
թ. Հաղպատ				1	1			1						1	1,5
ժ. Հաղուց թառ														2	3,0
ժ. Հոռոմնոյլ			1											1	1,5
ժ. Հոռոմնոյլ								3						2	3,0
ժ. Հոռոմնոյլ									1					4	6,0
ժ. Հոռոմնոյլ										1				2	3,0
ժ. Հոռոմնոյլ											1			1	1,5
ժ. Հոռոմնոյլ												1		67	100,0
ը. Հոռոմնոյլ	2	1	1	2	1	1	1	40	5	2	1	4	5	1	67
ը. Հոռոմնոյլ	3,0	1,5	1,5	3,0	1,5	1,5	1,5	60,0	7,5	3,0	1,5	6,0	7,5	1,5	100,0
ԸՆԴՀԱՆՈՒՐ	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0		

ԳՈՐԾՈՒՄՆԵՐ	ԴԻՎՔԵՐԻ	Ա. Ա. Բ. ՄԱԽԻ- ՄԱԿԻՆԵՐԻ	ՏԱՐԱԾՈՒՅԹ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ
"	Ալլիկանք	.	1—29,41—48	2,220
բ	Աղջոց	.	30	20
զ	Արդաքան	.	49,50	220
դ	Բաղնայլ	.	51,52	180
է	Գոշավանք	.	31,32	140
դ	Դոեղի Բարձրաքաշ	.	33	20
է	Թանահանտ	.	34,35,36,53	200
ը	Կեշառիս	.	54	200
թ	Հաղբատ	.	55,56,57,58,59	305
ժ	Հաւուց թառ	.	60	100
ժ	Հոռոմնոյլ	.	61,62	50
ժ	Հոռոմնոյլ	.	63,64	175
ժ	Մակարայ վանք	37,38,39,65	100	4
ժ	Նորականք	66,67	180	5
ժ	Չորուտ	.	40	40
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ		4,150	197	21 <sup>1/15</sup>

Նկատի ունենալով, վոր

1. Այրի վանքի գեղաքերի միջ (վորոնք կազմում են բոլոր գեղաքերի կեսից ավելին, այն և 55<sup>0</sup>/<sub>0</sub>-ը) 79<sup>0</sup>/<sub>0</sub>-ի ժամուցը 20 դահեկան ե,

2. բոլոր գեղաքերի 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ը կազմում են այն գեղաքերը, յերբ ժամուցը 20 դահեկան ե,

3. Այրի վանքի գեղաքերի միջին գինը 21<sup>1</sup>/<sub>5</sub> կամ գրեթե 22 դահեկան ե,

4. Ժամ-պատարագների գներն ավելի շատ միտում են 20 դահեկանից բարձր, քան ցածր ե,

5. 20-ից 25 դահեկաննոց միջին գներն ընդունակում են բոլոր գեղաքերի 76<sup>0</sup>/<sub>0</sub>-ը,—

Հնարավոր չենք գտնում կանգ առնել բոլոր վանքերի՝ միջին թվարանականի վրա, այն ե՝ 21<sup>1</sup>/<sub>5</sub> դահեկանի վրա, իբրև գերջնական միջին սակագնի վրա, այլ անհրաժեշտ ենք համարում սակագնի սահմանները բոլոր վանքերի միջին թվարանականից մի քիչ գեղի ցածր ու ավելի գեղի բարձր ընդլայնելով հավաստել, թե ուս միջնագարում ժամ. պատարագների միջին սակագինը լեզել ե 20-ից մինչեւ 25 դահեկան:

## IX.

Ի՞նչ նշանակություն ունի ուշ միջնադարի ժամ-պատարագների սակագնի այս հայտնագործումը:

Ամենից առաջ բնագրաքննական նշանակություն Այս կարելի յի տեսնել հաջորդ որինակներից:

1. Աշտարակի ս. Մարիանե յեկեցու արձանագրության միջ մի նվիրատու տիկին գրում ե. «...ես Տիկնացտիկին, ամուսին Արջուկին... եսու զՓարասանց այգույն կէսն ի յգ. որպէս զնեցի և տվի... խոստացան ի տարին ը. պատարագ»: Արձանագրության չա. տառերն ընդունվել են հայոց տարեթիվ, և արձանագրությունը «Վիմականում» եւ դրված ե հենց 854 թվականի տակ: <sup>1</sup> Այս ըմբռնման դեմ առարկել ե տկաղեմիկ ն. Մարը գրելով.

„Указанный год выводится из цифры 303 (<sup>14</sup>), принятой за дату армянской эры, тогда как это, по всей вероятности, цена, за которую продала владетельница „государыня государынь“ половину сада Парасанц церкви св. Мариианы: „за что купила, за то и продала“ церкви, то есть без прибыли, почему ей и были назначены в год две службы“.<sup>2</sup>

Ի՞նչ կարող ե ասել սակագինը Մարի հիմնավոր առարկության ողտին: Յգ=303-ը, վոր անշուշտ փող ե, հայտնի չե, թե ինչ փող ե: Այն կարող եր լինել դահեկան կամ դրամ: Դահեկան ընդունելիս մեկ ժամի գինը լինում ե 303:2=15 1<sup>1</sup>/<sub>2</sub> դահեկան, մի զին, վոր մեզ հայտնի ամենաբարձր գնից—75 դահեկանից—կրկնապատիկ գերազանցում ե, Խիստ անհավանական ե, վոր մեկ գյուղական յեկեցու այսքան բացառիկ նվեր

<sup>1</sup> «Վիմական», եջ 3:

<sup>2</sup> «Վիմական», առաջաբան, VI—VII:

տրված լինի: Մեզ թող չմոլորեցնեն «տիկինաց տիկին» բառերը, վորոնք նվիրատուի սոցիալական տիտղոսը չեն, ինչպես ըմբռնել և Մառը „ՌՕԾ- դարանա գումարից“ թարգմանելով: Վայ, Տիկնացտիկին հատուկ անուն ե<sup>1</sup>, ինչպես վոր հատուկ անուններ են Թագուր, Թագոււի, Խանում, Աղամ, Սուլթան, Մելիք, Սուլթանշահ, Մելիքշահ, Շահանշահ, Կոյազ, Պալկովնիկ և այլն: Յեթե «տիկնաց տիկին»-ը տիտղոս լիներ, նրանից առաջ հիշված կլիներ հատուկ անունն ել, ինչպես տեսնում ենք հետևյալ որինակում: «...ես Շուշան տիկինաց տիկին, զուգակից Գրիգորո իշխանի»...<sup>2</sup> Պարզ ե, վոր Աշտարակի յեկեցու նվիրատուն «թագուհիների թագուհի» չե, այլ մի սովորական հարուստ հավատացյալ կին՝ տեսչացող 2 պատարագի: Յեթե նրա նվիրած գումարը գահեկան համարենք, այն ժամանակ Յի. (303) կարգալու տեղ պետք ե կարգանք ճպ (83)<sup>3</sup> հիշելով, վոր գլխատառ Յի ու ձեռագրանման ձ-ի շփոթությունը շատ հավանական ե: Այս ուղղումով մեկ ժամի գինը կլինի 83:2=41 1/2 դահեկան, մի զին, վորն ըստ մեր տախտակ- ների հնարաւոր ե: Խսկ յեթե տեղն ու տեղն ստուգելու հետևանքով Յի ու ձ-ի շփոթությունն անընդունելի համարվի, պետք ե ընտրել յերկրորդ լուծումն, այն և ին՝ յգ. ողբամ» ե: Այս գեղաքում նվերը հավաստի կլինի 30<sup>3</sup>/<sub>10</sub> դահեկանի, և ժամի գինը կլինի 30<sup>3</sup>/<sub>10</sub>:2=15<sup>3</sup>/<sub>20</sub> դահեկան, վորն ըստ մեր տախտակների նմանապես հնարաւոր ե: Նվիրած գումարի մեջ մի քիչ տարրինակ և միավորի (q=3) հիշատակությունը: Կարելի յե յենթաղրել, վոր այս գերջին տառը վոչ թե զ, այլ զ:<sup>3</sup> Այս գեղաքում կունենանք. և դ. կամ թե չ. զ., այսինքն 80 դահեկան և կամ թե 200 դրամ, խսկ ժամի գներն ել կլինեն 40 դահեկան կամ թե 150 դրամ (= 15 դահեկան) առանց վորեն կոտորակային մնացորդի:

2. Չորուտի վանքի արձանագրությունը «Վիմականում» տպված և այսպես. «ես Մեսրոր երէց գնեցի զնատոյսենց այգին ի և դահեկան... և ետուն ը. պատարագ»<sup>4</sup> Նույն արձանագրությունը Յերգանդ Լալայանը մեջ ե բերում՝ նվիրած գումարը կարդալով իմ. դահեկան=20,000 դահեկան:<sup>5</sup> Մրա դիմաց 2 պատարագ ստանալիս՝ ժամի գինն անում և ...10,000 դահե- կան, մի ահռելի գումար, վոր գերազանցում և միջին սակագնից ..400

<sup>1</sup> Այս անվան կրծան ձևն ե «Տիկնաց», վոր գտնում ենք Արջոյառնի արձանագրության մեջ: («Վիմական», հավելված, արձ. 13, եջ 124.) Մի քանի արձանագրության մեջ պատահում ե նաև «Տիկին» հատուկ անունը: «Վիմ.» 1259 ա, եջ 102, 1278, ա, եջ 120 և այլն ու Զարայան, և, 110:

<sup>2</sup> «Վիմական», արձ. 994 թ եջ 11:

<sup>3</sup> Նման գեղաքերի հանդիպում ենք վրաց զրամակիտության մեջ ել, վորտեղ վրաց գեղաքերի համարական միայնակ դ. տառը Բրասեն, Բարթոլոմեյն ու Պախումովը բացատրում են իբրև զանգ, զրամ ու զիրհեմ բառերի առաջին տառ: Ե. Ա. Պա- խոմով, „Մոնետ Հրազդակ“, չ. 1 (Домонгольский период), СПБ, 1910, եջ 124—126: Փո- ղերի միատարակ համառոտագրությունների հանդիպում ենք գերջին դահեկանու- թյան մեջ ել: Տեսեք մեր „Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանի, ծածկագիրը“ հոդվածը, և գույք (, Բանքեր Հայաստանի Գիտական Խնաժիտությին“, գիրք Ա-Բ, 1921—1922, Վա- ղարշապատ, եջ 146).

<sup>4</sup> «Վիմական», հավելված, արձ. 157, եջ 249:

<sup>5</sup> Յե. Լալայան «Գեղարքունիք», «Տեղագրություն» գլուխ եջ 95:

## 24 թ.Ա. ԱՊԴԱԼԲԵԳՅԱՆ - ՄԻ ԳԱՐՏՆԻՔ ՀԱՅ ՎԻՄԱԿ. ԱՐՁԱՆԱԳՐ. ՄԵԶ

—500 անգամ... Յեթե Լալյատինի ընդորինակումը կարդանք մինչև անգամ «գնեցի այզին ի Ռ գահեկան», այսինքն 1,000 դահեկան, ելի ժամի գինը կլինի 500 դահեկան, վոր գերազանցում ե ամենաբարձր սակագնից — 75 դահեկանից — մոտ 7 անգամ, մի յերեռոյթ, վոր ելի խիստ անհավանական ե.<sup>1</sup> Այս ինչ «Վիմականի»  $\text{Խ}=40$  դահեկանը միանգամայն նորմալ գին է տալիս.  $40 \cdot 2 = 20$  դահեկան, մի զին, վորից ունենք 39 դեպք, յեթե Զորուտինը չաշգինք:

3. Ամենից զարմանալին Այրի անքի յերկու արձանագրությունն են: Սրանցից մեկում նվիրատուները — Դրիգոր ու Լուսիտ — ընծայում են ձ՛մի ( $=100,020$ ) դահեկան և ստանում 6 որ ժամ, մյուսում մի այլ նվիրատունավանորեն [Գէ]որգ — տալիս և դարձյալ ձ՛մի ( $=100,020$ ) դահեկան և ստանում 6 որ ժամ:<sup>2</sup>

100,020 դահեկանը կանի 1,000,200 դրամ:<sup>3</sup> Այս գումարների մեծության մասին գաղափար տալու համար բավական և ասենք, վոր սրանք գերազանցում են այն ծանրածանը հարկերից, վոր Սմբատ Ա-ի ժամանակ վճարվում եր արարակերին<sup>4</sup> և կոմ վոր Կիլիկիան տվեց ստար նվաճողներից մեկին:<sup>5</sup> Խիստ կասկածելի յե նաև այն, վոր 100,000 դահեկանի կողքին տևոնում ենք չնչին 20 դահեկանի մանրակրկիտ հիշատակություն: Վերջապես հապա պատարագների թիվն, ընդամենը 6 ժամ, վորին ուրիշներն արժանանում ենին հազար անգամ քիչ վճարելով... Աշկարա պարզ ե, վոր արձանագրության ընթերցումն ու ընդուրինակումը սիսալ ե:

Ի՞նչպես և ուղղվում սիսալ:

Հետեյալ կերպով: Այրի վանքի մի արձանագրության մեջ հանդիպած ունեկ անունը, վոր հայտնի յե այլ արձանագրություններից ու մատենադիրներից ել<sup>6</sup> Ստեփաննոս վ. Միթթարյանը հավանորեն փակագրով տեսած լինելու պատճառով կարգացել և տպել ե Ամենի:<sup>7</sup> Այս իրողությունն իսկույն լուսավորում է տեսարանը: Անսիջապես յեզրակացնում ենք վոր ձիշտ սրա նման նա արձանագրության միջի ձ՛միի ( $= հարյուր Ռի քսան$ ) դահեկանը յերկու անգամ ել կարգացել և ձ՛միի ( $- հարյուր հազար քսան$ ): Թվական անուան մեջ ու շաղկապի յերեկան գալը զարմանալի չե նույն իսկ գասական հայերնում (հմմտ. «ութ Ռի տասաններորդ» բառը), ուր մնաց ուշ միջնադարի գրաբառում: Այրի վանքի մի այլ արձանագրության

<sup>1</sup> 1,000 դահեկանը կամ 10,000 դրամը մեկ գրամով անգամ հաշվելիս կանի 10 քիլոմ մոտ 25 ֆունտ արծաթ, իսկ բանը վոր հասալ 10,000 դահեկանին կամ 100,000 դրամին, ապա նույն նվազագույն հաշվով կունենանք 100 քիլո կամ մոտ  $6^{1/4}$  փուր արծաթ:

<sup>2</sup> Միթթարյան, Այրի վանքը, էջ 8 ու 15:

<sup>3</sup> Մեկ միթթարյան գրամը նվազագույն 1 գրամմ կշռով կանի 1,000 քիլո կամ մոտ 1 տոնտա կամ մոտ  $32^{1/2}$  փութ արծաթ:

<sup>4</sup> „Տայր (արքայն Սմբատ) ... իրի կշռով վաթսուն հազար դահեկանաց՝ Գրասիանակերպություն Հայոց”, Ղուկաս, մատեն, Ե. Թիֆլիս, 1912, էջ 214:

<sup>5</sup> „Անորէն նայիպն Հայիպն Ալթուն-Բուղայն (Հայոց չազ=ողէլ=1337 թ.)... յիշուից յերեկոս (=հարձակմեց Կիլիկիա, Թ. Ա)... ու իստ...մալ ի մենէ, որ եր զնո զը.” ( $=600,000$  դրամ): Զալալան, Ա. 458—460:

<sup>6</sup> «Վիմական», արձ. 1268<sup>b</sup>, էջ 111, 1280<sup>b</sup>, էջ 122 հայլն, Գանձակեցի «Պատմություն հայոց», Ղուկ. մատեն. Գ. Թիֆլիս, 1910, էջ 349:

<sup>7</sup> Միթթարյան «Այրի վանք», 9:

մեջ նույն հարյուր հսան թիվը գտնում ենք «Եւ» շաղկապով ել. «Ես տիկին Զուզա ետու ձ եի ի դահեկան ... զ. ժամ»:<sup>1</sup> Այս ուղղումով միանգամայն լուծվում ե ամեն դժվարություն: Թե Գրիգորն ու Լուսիտը և թե Գեղորգը տիկին Զուզայի նման նվիրել են 120 դահեկան և վերջինիս պես ստացել 6 ժամ: Բոլոր գեպքերում ել ժամագինն և 20 դահեկան:

Ինչպես այս որինակները ցույց են տալիս, սակագնի ու միջին սակագնի մասին իրազեկությունը կարող ե նպաստել արձանագրությունների ձշում: Մեր համոզումն ե, վոր յեթե այս նկատառումով տեղն ու տեղը վերաստուգիվեն հայ վիմարձանագրությունները, միջին սակագնից խիստ տարբերվող դեպքերի փողային գումարները կարող են նոր ընթերցուածներ տալ:

## X.

Սակայն սակագնի հայտնագրութման գլխավոր նշանակությունը տընտեսագիտական ե: Սակագնի, իրու կովանի, կիրարկումը սոսկ մեքենական գործողություն չե կարող լինել: Սրա ոգտագործման լիովին անհրաժեշտ պայմաններն են ի միջի այլոց ու ամենից առաջ

ա) արձանագրությունը կրող տվյալ հիմնարկի հիմնադրման, վերանորոգումների ու ընդհանրապես նրա պատմական անցյալի ժամանակաբանության ձշում:

բ) արձանագրության մեջ մատնանշված վայրերի ու կայքերի աշխարհագրական սահմանումը,

գ) արձանագրության հնագրական հետազոտությունը և  
հ) զրամագիտության վոչ միայն հնագրական-հնագիտական, այլ և տնտեսագիտական ուսումնասիրությունն ու խորացումը:

Այս նախնական պայմանների իրազործումից հետո անտեսագետը ժամանակագիտական գործությունների փողային ու այլ համարժեքների ուսումնասիրությամբ, վոր կատարվելու յե սակագնի յերեռույթն իրողություն ու հիմք ընդունելով կարող ե խոշոր հետեանքների համեմ նա կարող ե

1. Բացի տվյալ հիմնարկի անտեսությունն ուսումնասիրելուց՝ տարբեր վայրերի սակագների տարբերություններ հեղակացություններ հանել առարկան սայոնների անտեսական հարակցությունների (շոփություն) ու փողային շրջանառության զարգացման աստիճանների զանազանության մասին:

2. Միենույն վայրի տարբեր ժամանակամիջոցում յեղած սակագներից յեղակացությունների նույն ուայոնի անտեսական հարակցությունների ու փողային շրջանառության վերելքի կացությունները,

3. Ամբողջ յերեռում յեղած սակագնի փոփոխություններից յեղակա-

<sup>1</sup> Միթթարյան «Այրի վանք», 26—27: Հմմտ. «Եինեցաւ սուրբ տաճար թվին ոճի կացություն»: «Վիմական», արձ. 1674 թ. էջ 194:

ցություններ անել գրամատնտեսության, ուրեմն և փոխանակային տնտեսության զարգացման աստիճանի մասին, փողային մետաղների թանգառալու և եժանանալու մասին (մի յերեւյթ, վորի մյուս յերեսը կլինի, ընդհակառակն, ապրանքների եժանանալն ու թանգանալը) և կամ փողային միավորի կշռի փոքրանալու և մեծանալու մասին:

4. Կոնկրետ սակագինը կամ միջին սակագինը կարող է հնարավորություն տալ, վոր կազմվեն կայքերի ու այլ ապրանքների գների տախտակներ, վորոնք այնքան անհրաժեշտ են գների պատմության համար: Միայն Ալիշանի «Շիրակից» հանած տվյալների համաձայն մենք ժամանակագների միջին սակագնի հիման վրա սեագիր կազմել ենք գների ցանկեր (ա) գյուղերի՝ 18 արձանագրություն, (բ) տների՝ 25, (գ) կուղակների՝ 12, (դ) ջրաղացների ու ձիթաղացների՝ 13, (ե) այգիների՝ 29, (զ) հողերի՝ 7, (է) ջրերի՝ 2 և ը) խառն՝ 43, ընդամենը 149 արձանագրություն հիմք ունենալով: Գների, հատկապես կայքերի գների պատմության վերաբերյալ ամենից շատ նյութ պարունակող գիրքը մեզանում Միմեռն կաթողիկոսի «Զամբոն» ե, վորի՝ գներին վերաբերող տվյալները համառում են մինչև XV դարը: Սակագնի հայտնագործմամբ մեր արձանագրությունները դառնում են մեծահարուստ մատյան, իսկական «Վիմական Զամբո», վոր հնարավորություն և տալիս XV դարից յետ գնալու մինչև X դար: Այս կապակցությամբ, թեկուզ ամենից ընդհանուր զծերով, ամբողջանում և մեր տնտեսական կյանքի մի հազարամյակ—X դարից մինչև XX դարը:

5. Կայքերի (որինակ, գյուղերի, արտերի, այգիների, խանութների, աղացների և այլն) գների վերականգնումը հնարավորություն կատարելու վերաբերյալ հանելու նրանցից ստացվող հասույթների մասին: Ընդունելով, վոր կայքի գինը վոչ այլ ինչ ե, բայց յեթե կապիտալացման (կապիտալիզացիա) յենթարկված ռենտա կամ տոկոս, և իմանալով այն ժամանակվա տոկոսի չափերը, մենք կարող ենք կայքի գինը դրամագլուխ համարելով և տոկոսի չափերի վրա հիմնվելով՝ հաշվել կայքի, որինակ, այլու, ջրաղացի հասույթի մոտավոր քանակը: Հասույթների քանակը կարող է հիմքեր տալ հարկերի, ապրանքային շրջանառություն, տնտեսության գործակաների բյուջեների, աշխատավարձի և ուրիշ յերեւյթների մասին: Ցեվ այլն և այլն:

Թվածներս, անշուշտ, այն բոլորը չե, վորին իրազեկ լինելուն կնպաստե սակագինը, բայց հենց վերոզյալն ել բավական և նշելու, թե վորքան առատանում է հունձը, վորն սպասում ե յուր մշակներին: Հասկանալի յե, վոր այս անդաստանում թափած ջանքերն այնքան ավելի արդասաբեր կլինեն վերջնականում, վորքան ավելի շատ հիմնած լինեն քաղաքատընտեսության թեորիական հիմունքների վրա, և մեր տնտեսական կյանքի յերեւյթները վորքան ավելի շատ համեմատվեն ընդհանուր տնտեսական զարգացման պատմության համապատասխան յերեւյթների հետ:

## բագների գների մասին:

Պատմական անցյալ շրջանների գների մասին կոնկրետ ու շոշափելի զաղափար տալու համար տնտեսագետներն ու պատմաբանները սովորաբար այն գները վեր են ածում արդի փողերի: Շատ ավելի նպատականարմար է հին գները ներկայացնել իրենց ժամանակի թանգագին մետաղների կշիռներով (մի բան, վոր վոչ մի առարկություն չի վերցնիլ, քանի վոր ի՞նչ կարելի յե առարկել կշռի գեմ) և ապա յերկրորդաբար ու յերրորդաբար նշանակիլ գներն արդի թանգագին մետաղների կշիռներով ու արդի փողերով՝ նկատի ունենալով փողային մետաղների այն դարերում ու մեր որերում ունեցած համաժամանակյա ու տարաժամանակյա արժեքային հարաբերությունները (մի բան, վոր կարող է առարկություններ վերցնել): Այս կանոնով առաջնորդվելով՝ մենք ել ուշ միջնադարի ժամանակները ներկայացնենա նախ և առաջ ուշ միջնադարի մետաղյա կշիռներով:

Գիտենք, վոր ուշ միջնադարի ժամապատարագների գները նշանակված են դաշեկանով ու «գրամով»: Տեսել ենք, վոր առաջինը հնում գլխավորավորակն վոսկի յե յեղել, իսկ յերկրորդն՝ արծաթ: Սրա համաձայն ել հիշյալ գները կարելի յե ներկայացնել թե վոսկե գներով ու թե արծաթե գներով:<sup>1</sup> Մենք գերադասում ենք հիշյալ գները ներկայացնել մենակ արծաթե գներով: Սրա պատճառը տեղի սուրթյունը չե միայն: Կո մի ուրիշ հանգամանքն ել, վորն այս ե:

Պատմաբանների, տնտեսագետների ու զրամագետների մեջ ավելի ու ավելի և արժատակալում այն կարծիքը, թե միջնադարում թանգագին մետաղների միջից շրջանառության ասպարեզում գերազիւ գործածություն և ունեցել արծաթը, քան վոսկին միավոր յեղել և առավելապես արծաթաթաստակը, (серебрянная монета, Silbermünze), քան վոսկեստակը<sup>2</sup> (золотая монета, Goldmünze), վոսկին մեջտեղ և յեկել հաղվագյուտ գեպիքում, և նրա հիշատակությունը կատարվել ե գլխավորապես հաշվի ու համրանքի նկատառությունը կատարել ե յերկու գանձկանով, այս չի նշանակում, թե նա անպայման վճարել ե յերկու վոսկի դահնեկան: Վճարումը կարող եր կատարվել և մեծ մասամբ կատարվել ե արծաթով «ըստ ժամանակի վարման», ինչպես տառեմ և Գոշն, այսինքն ընթացիկ կուրսով: Յերկու զահեկանի գնում կատարողը վճարում ե վոչ թե 2 վոսկի, այլ ասենք, 2×10 արծաթ զրամ՝ հաշվելով զահեկանը 10 զրամ: «Հաստ ժամանակի վարման» յերկարատե ու հաճախակի գործածությունն արծաթաթաստակների վորոշ քանակին հատկացնում ե զահեկան անունը, և այս զահեկան բառը, վոր առաջ իրական վոսկի եր յենթագրում, դառնում ե արծաթի մի վորոշ գումարի անուն, մի տեսակ «արծաթ զահեկան»: Վոսկի փողը չքանում ե, զանում հաշվեղրամ<sup>3</sup> (счетные деньги, Rechengeld): Յերկու վոսկին գառնում ե հաշվեղրամ, իսկ արծաթը մնում

<sup>1</sup> Վոսկե ու արծաթի գների մասին տեսեք Կ. Մարքս „Կապիտալ“, տ. I, Մոսկվա, 1909, հջ 61:

<sup>2</sup> Հմմտ. որինակ, Бартольд, 17—18 ու 44, Կулишер «Լекции» I, 207, Պախոմով «Монетные клады», 20:

<sup>3</sup> Marx «Zur kritik», 57, «Կ կրիտիկ», 85:

և իրական փող ու իրական վճարամիջոց (платежное средство, Zahlungsmittel), գների ուսումնասիրության դեպքում ավելի նպատակահարմար ե յիշակեառ ունենալ արծաթե փողը և սրա ել այն միավորը. վորն իրոք գոյություն է ունեցել շրջանառության ասպարեզում: Այս վերջին խոսքն ասում ենք այն պատճառով, վոր արծաթ փողի մեծ միավորներն ել կարող են հրապարակում գոյություն չունենալ և սոսկ հաշվելը ամառ գարձած լինել՝ իրական փողի գերը զիշելով ավելի մանր արծաթաստակներին:

Ըստ այսմ մենք ել ընդունելով, վոր ուշ միջնադարում չայաստանի մեջ շրջանառության ասպարեզում գերազանց գործածություն ունեցել և արծաթ փողն (ինչպես վոր ե, որինակ, արդի Պարսկաստանում), և սրա ել վարուն միավորը յեղել ե «գրամը» կամ «սպիտակը», ժամ-պատարագների գները տալիս ենք «գրամի» կամ «սպիտակի» կշռի վրա հիմնվելով ու դահեկանն ընդհանրապես հաշվեդրամ համարելով:

## XII.

Դրամ-դիբհեմը, վոր միջնադարի առաջին կիսում ընդհանուր առմամբ անփոփոխ եր մնացել՝ զրեթե հավասար լինելով մեկ մսխալին (4,00—3,75 գրամ կամ  $\frac{16}{17}$ — $\frac{15}{17}$  մսխալ), յերկորդ կիսում (X—XIV դարեր) շուտ շուտ փոխել ե կշռը՝ XIV դարի վերջում իջնելով ու հասնելով  $\frac{1}{4}$  ու նույն իսկ  $\frac{1}{5}$  մսխալի (1,05—0,85 գրամ):<sup>2</sup>

Ի՞նչ կարժենար այս դեպքում մեկ ժամ-պատարագը միջին սակագնութեանը կու 20—25 դահեկան:

20—25 դահեկանը 10 գրամով կամի 200—250 գրամ: Դրամը մեկ մըսխալ ընդունելիս ժամագինը կլինի 200—250 մսխալ կամ մոտ 2— $\frac{1}{2}$  ֆունտ, կես մսխալ հաշվելիս՝ 100—125 մսխալ կամ մոտ 1— $\frac{1}{4}$  ֆունտ և  $\frac{1}{4}$  մսխալով՝ 50—62 $\frac{1}{2}$  մսխալ կամ մոտ  $\frac{1}{2}$ — $\frac{5}{8}$  ֆունտ միջնադարյան արծաթ:

Սրանք, այսպես ասած, կոր թվերն են, չաշվենք ավելի ստույգ: Ընդունելով գրամի հաջորդական կշռները 4, 3, 2 և 1 գրամմ՝ նվազագույնը, միջին ու բարձրագույն ժամագների միջնադարյան արծաթի 25-ը՝ 250 ու 75 դահեկանը՝ 750 գրամ, 20-ը՝ 200,

«Դրամի» Նվազագույն գին Միջին գներ Բարձրագույն գին  
Կտորը 50 դրամանոց 200 դրամնոց 250 դրամնոց

Ա. 4 գրամմ	200 գրամմ	800 գրամմ	1000 գրամմ	3000 գրամմ	2200 գրամմ	6600 գրամմ
Բ. 3 »	150 »	600 »	750 »	2250 »	1650 »	4950 »
Գ. 2 »	100 »	400 »	500 »	1500 »	1100 »	3300 »
Դ. 1 »	50 »	200 »	250 »	750 »	550 »	1550 »

<sup>1</sup> «Անգիպայում, Վիենեմ Աշխարհակալի ժամանակ, ասում ե Մարքսը, — 1 ստերլինգը, վոր այն ժամանակ անում եր 1 ֆունտ զուտ արծաթ, ու շիլինգը, վոր մեկ ֆունտի  $\frac{1}{20}$ -ը եր, լոկ իբրև հաշվեդրամ գոյություն ունելին, իսկ գոյություն ունեցող ամենափոշոր արծաթը պենսին եր, մեկ ֆունտ արծաթի  $\frac{1}{20}$  մասը»: «Zur Kritik», 58, «Կ կրիտիկ», 84:

Հ. Пахомов «Монетные клады», 34—35:

Սրանք ժամագների կշռներն են միջնադարյան արծաթով: Շեշտում ենք «միջնադարյան» բառը, վորովհետև արծաթի արժեքը նոր գարում այն չե, ինչ վոր յեղել ե միջնադարում: Թանգագին մետաղների միջնադարյան ու այժմյան կշիռներն արժեքի տեսակետից նույնացնելը տնտեսագիտուրին սխալ ե: Անհրաժեշտ և հաշվի առնել թանգագին մետաղների արժեքի փոփոխությունները, վորոնք նրանց արտադրության ասպարիզում կիրառվող աշխատանքի արտադրողականության այս կամ այն աստիճանի հետևանք են:

Միջնադարում վոսկու և արծաթի հարաբերությունը յեղել ե 1 առ 10<sup>1</sup>, նոր գարում արծաթի արժեքն ընկել ե, այսինքն՝ քիչ աշխատանքով ավելի շատ արծաթ և արտադրվել: Այս նշանակում ե, վոր միջնադարի 1 գրամմ արծաթն այժմյան արծաթի 1 գրամմին չե հավասար, այլ ավելի շատ արծաթի: Ֆրիզրիխ Ենգելով XIX դարի վերջին առանձյակում արդեն վոսկու և արծաթի հարաբերությունը հասել եր 1 առ 22-ի: <sup>2</sup> Ուրեմն միջնադարյան 1 գրամմ արծաթը հավասար եր 2,2 գրամմ արծաթի: Արծաթն եժանացել եր 120<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Ըստ այսմ մի գաղափար կազմելու համար, թե վերեկի ժամագները վորքան կլինեն այժմյան արծաթով, պետք և այն կշռները շատացնենք 120<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Այն ժամանակ այժմյան արծաթի կստանանք հետեւյալ կշիռներով:

«Դրամ»-ների Նվազագույն գին Միջին գներ Բարձրագույն գին  
Ենակեցեն 50 դրամանոց 200 դրամնոց 250 դրամնոց 750 դրամանոց

Ա.	440 գրամմ	1760 գրամմ	2200 գրամմ	6600 գրամմ
Բ.	330 »	1320 »	1650 »	4950 »
Գ.	220 »	880 »	1100 »	3300 »
Դ.	110 »	440 »	550 »	1550 »

Միջնադարյան արծաթի գների ու նորադարյան արծաթի գների կշռների թուուցիկ համեմատությունն անդամ ակնառու (ԽԱԳԼՅԱՆ) ցույց ե տալիս, թե վորքան մեծ և լինում սխալը, յերբ գների մասին գաղափար կազմելու համար թանգագին մետաղների միջնադարյան կշռներն են միջին նկատի ունենում և այս կշռը վերածում արդի փողերի՝ առանց հաշվի առնելու թանգագին մետաղների տարածամանակյա արժեքային հարաբերությունները:

Ժամագների ուշ միջնադարյան ու արդի կշռները պարզելուց հետո մենք արդեն կարող ենք անցնել յերբորդ կետին՝ տեսակետից նոր գարում արծաթի արժեքի փողերով: Ըստունելով, վոր արդի սուսական սուրբին պարունակում ե 4 մասաւ 21 գոլիս=18 գրամմ զուտ արծաթ, նորադարյան արծաթի վերեկի կշռների համաձայն կստանանք հետեւյալ գներն արդի սուրբիներով ու կոպեկներով:

<sup>1</sup> Marx „Zur Kritik“, 161 „Կ կրիտիկ“, 157:

<sup>2</sup> К. Маркс «Капитал», I, 108, 4-րդ հրատարակության (Ենցելսի) ծանոթությունը:

30 թ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ.

«Դրամ»-ների Նվազագույն գին		Միջին գներ		Բարձրագույն գին	
Տեսակներն ըստ կույ	50 դրամանոց	200 դրամանոց	250 դրամանոց	750 դրամանոց	
Ա.	Բ.	Կ.	Դ.	Ե.	
Ա.	24,44	97,76	122,20	366,60	
Բ.	18,33	73,32	91,65	274,95	
Գ.	12,22	48,88	61,10	183,30	
Դ.	6,11	24,44	30,55	91,65	

Գների ցանկի սկ շրջանակն ակնառու ցույց և առլիս, թե ինչպես միջին գները մի թեով հավասարվում են նվազագույն գնի բարձր կոպարին ( $\gamma = 200 - \beta = 50$ ), իսկ մյուս թեով՝ բարձրագույն գների ստորին կոպարին ( $\beta = 250 - \gamma = 750$ ): Միջին գների շրջանակից դուրս են մնում  $\beta, \gamma, \beta = 50$  դրամանոցներն ու  $\beta, \gamma, \beta = 750$  դրամանոցները միայն, իբրև ծայրահեղ շեղումներ: Աշկարա յերկում և նաև այն, վոր անվանական գները (5 դահեկան, 20—25 դահեկան, 75 դահեկան) նշանակություն չունեն, կարեռը փողերի անունների տակ թագնված մետաղային կշիռն և ու սրա արժեքը:

Այս կետի վրա ընդհատում ենք ուշ միջնադարի հայոց ժամագը-ների տնտեսագիտական վերլուծությունը: Զենք կալող սակայն այստեղ չխոստովանել, վոր արժեքների ուսումնասիրության ավարտակեալ մետա-դային գները չեն և վոչ ել այլ ապրանքներով արտահայտված գները: Ար-ժեքների ուսումնասիրությունը կավարտվի այն ժամանակ, յերբ ուսումնա-սիրող անտեսագետը կցտնել և կուրդե, թե այս ինչ դարձրջանում ավյալ արժեքի մեջ հանրուեն անհրաժեշտ վորքան աշխատանք և մարմնացած: Արժեքների ուսումնասիրության վերջին սահմանը, Մարքսի տերմինով ա-սենք, արժեքի բարցարձակ արտահայտություն է: <sup>1</sup> Հստ այսմ մենք գեռ պետք և ցույց տացինք, թե ժամագների միջնադարյան արծաթի կշիռները վորքան ժամանակվա աշխատանքի վարձ կանելին ուշ միջնադարյում, և ուրեմն այն կշիռների մեջ ինչ քանակությամբ հասարակ կամ անորակութալ աշխատանք կար մարմնացած: Բայց մենք այս թողնում ենք անկատար: Վերջին սահմանին չհասած կանդ ենք առնում վոչ միայն այն պատճառով, վոր ընդհանուր տնտեսագիտություն ել գեռ փորձեր չի արել մոտենալու հանձարեղ տնտեսագետի նշած իդեալական սահմանափարին, այլ մտնու-վանդ այն պատճառով, վոր թե հնադարյան ու նորդարյան և թե միջ-նադարյան Հայաստանի մեջ յեղած աշխատավարձի ու սրա միջոցով և աշխատանքի պատմական-տնտեսագիտական ուսումնասիրության համար ինչ վոր պիտի արվի, դեռ նոր պիտի արվի: <sup>2</sup>

<sup>1</sup> „Արժեքի բացարձակ արտահայտություն կիներ արժեքը բանվարական ժամանակով արտահայտելու“: Կ. Մարքս „Տեորի որաբաօհու հուսումություն“ (տ. III, թ. 113):

<sup>2</sup> Վաղ միջնադարի աշխատավարձին վերաբերող տվյալներ բերված և վերլուծված են մեր մերից, տակալին անտիպ աշխատության մեջ, վոր կոչվում է „այլ օքնակա-ցի ու գեղջկաւու աշխատավարձը եթեցերուդ դարուու“:

### XIII.

Շարադրած նյութը 1926 թվականի դեկտեմբերի 4-ին Հայաստանի Դրատության և Արվեստի Ինստիտուտի պատմական—հասարակագիտական բաժնում զեկուցելուց հետո բարեպատեհ բերմունքով իրազեկ յեղանք հետեւյալ նոր իրողություններին:

Վոլքան մեզ հայտնի ե, նորադարի հարյուրամյակներում փողով ստա-ցած մշտական ժամագագի վիմագիր հեշտակություններ չկան հայոց մեջ: Այժմ կարող ենք իբրև բացարիկ որինակ մատնանշել Արցախի Թարգ-մանչաց անապատի զանգակատան արձանագրությունը 1695 թվականից:

«... Մահատեսի ներսէսս և Օսէփս տուինք սուրբ Անապատի Ա. թուման վախմ. սոքա տվին մեզ տարեն դ. ժամ... թվ. Ռձենի» <sup>1</sup>

Արձանագրությունը XVII դարից ե. Այս գարում թումանը պարսից թուման եր <sup>3</sup> և հավասար եր 15 մառչիլի կամ զուռուշի: <sup>2</sup> Լուռուշը կշուռ

<sup>1</sup> Մակար եպու. Բարխուտարյանց „Արցախ“, Բագու, 1895, էջ 285:

<sup>2</sup> Ղուկաս Վանանդիցի «Գանձ չափոյ, կշուոյ, թւոյ և դրամից», Ամստերդամ, 1699, էջ 26:

<sup>3</sup> Կա նաև մոնղոլական թաւման:

Հստ Բարտոլդի (էջ 16) «Թուման», ավելի ճիշտ, «Թիւմեն» բառը, վոր նշանակում է «տաս հազար», մոնղոլներն ասել են թուրքերից, իսկ սրանք ել հավանութեան արդի Զինական թուրքաստանի հին բնակիչներից: Կիրակոս Գանձակեցուն (էջ 357) հայտնի յե վոր միայն բասի նշանակությունն, այլ է հայրենիքը Զինաստան (վարտեղ պաշտում են «Շակլունիա» և Ալկար-Առունը ու «Մազրին»=մանգարին կուսքերը): «Ասեն Աստուած 3040 ամաց, և կայ այլ և 37 թուման ամս, որ է մին թումանն ատա հազար»: Ստ. Որբելյանը նույնպես զիտի (42, 419), որ «մի գումանն մի բիւր է»: Հստ այսմ Մազրաքիայի «Պատմության» այն հատ-մածը, վորն առանց ուղղման բերված և նաև Յ Մանանդեանն ու Հը. Աճառյանի «Հայոց նոր վկաների» մեջ (Վարդարշապտ, 1903, էջ 98), թե «...եկին յարեկլից է. զանի որդիք՝ ամէն զուման մի հեծերով, և մի զումանն էր Լի», (Մազրաքիա «Պատմություն նետողաց» Ս. Վակերը, 1870, էջ 23 «Ծո՞») պետք և ուղղել «մի զումանն էր Ժի»: Սրա հետ միասին պետք և ուղղել «Հայոց նոր վկաների» սոտր բաների ցանկ կազմովի—Հ. Աճառ-յանի այն բացարությունն եր, թե «զուման» զումանն էր զորքի բանական պահանջական թագավորությունը (!!! թ. Ա.):

Աճառյան «թումանը» միայն բանական թվական չե: Ինչպես, որինակ, հայոց մեջ առանձնական բառը, թումանն ել զանում և վարչական միավոր՝ սկզբում հավանութեան սերտ կապ ունենալով 10,000-ի գաղաքաբի հետ (ասենք՝ 10,000 շունչ, 10,000 ընտանիք և այլն): Յերբ Ստ. Որբելյանը կզ, 418—419 զրում ե. «աշխարհս տերության Ապազայ զանին, որ ասի ինեւ լստ մեծի զաւթարի դիւնին համարս 150 զումանի, և մի զումանն մի բիւր է», զես գծվար և աներկա ասել թե խոսքը վարչական միավորի մասին և և վոչ թե, որինակ, բնակչության կամ թե տնտեսությունների թիվ: Բայց յերբ Աղուանից Յեսայի կաթուղիկոսը զրում ե. «Եւ անտի անցեալ... ի սահմանն վրաց ի Տիկիս բաղաք և ի Կախէթի իւրովք բոլոր թեմիւր և թումանոք կամ թե «զերկիքն կախեթու և Քարթալայ, որ է Տիկիս, բոլոր թու-մանոք վրաց», —ակներե և, վոր վարչական բաժանման տերմին և զորք ածւում («Պատմու-թյուն համառատ Աղուանից Երկրի», Երուսաղմ, 1868, էջ 2, 52): Նույն այս տերմինը գտնում ենք Գավթիթ Սերբաստացու վկայաբանության մեջ: «Եւ զայլ սիս ոստիկան յըղեաց իւր տեղիւր իշխան Սերբաստացու և իւր թումանի» («Հայոց նոր վկաները», 505): Ի՞նչ բան և այս «թումանը»: «Հայոց նոր վկաների» սոտր բաների ցանկի մեջ Հը. Աճառյանը հարցականով գրել է. «Թուման—ըշակայքն» (էջ 785): «Հայոց նոր վկաներից» ատարիներ առաջ լույս տեսած «Նկարագիր» և Ստեփանոսի վանաց Սաղիանի... ի Շամախույ թեմի» գիրքը (գրեց Մերուր արքեպու: Սմբատեանց, Տիկիս, 1896, էջ 467) վորոշակի մատնանշել եր թումանի մի

«Թիւմանը»: «Հայոց նոր վկաների» սոտր բաների ցանկի մեջ Հը. Աճառյանը հարցականով գրել է. «Թուման—ըշակայքն» (էջ 785): «Հայոց նոր վկաներից» ատարիներ առաջ լույս տեսած «Նկարագիր» և Ստեփանոսի վանաց Սաղիանի... ի Շամախույ թեմի» գիրքը (գրեց Մերուր արքեպու: Սմբատեանց, Տիկիս, 1896, էջ 467) վորոշակի մատնանշել եր թումանի մի

եր և պարսկական մսխալ:<sup>1</sup> Ուրեմն թումանը հավասար եր 90 պարսկական մսխալի: Պարսից 86 մսխալը հավասար եր ոռուաց 96 մսխալին:<sup>2</sup> Հստ այս Պարսից 90 մսխալը կանի ոռուաց  $100\frac{1}{2}$  մսխալ կամ 448 գրամ: Մահաբանին ու ընկերը 448 գրամմ արծաթի վճարել են 4 ժամի համար. մեկ ժամի զինը կանի 112 գրամ: XVII դարի համար վոսկու. և արծաթի հարաբերությունն ընդունվում է 1 առ 15:<sup>3</sup> Մեր ժամանակվա 1 առ 22 հարաբերությունը  $47\frac{1}{2}\%$  արժեզրկում է՝ նշանակում: 112 գրամմ արծաթը  $47\frac{1}{2}\%$  հավելումով կանի այժմյան 165 գրամմ արծաթի: Ոռուական ոռութին 18 գրամմ զուտ արծաթ հաշվելով<sup>4</sup> 165 գրամմ արծաթը կանի 9 ոռութի 17 կոպեկ, վոր եր մեկ ժամի զինը: Այսպիսով թարգմանչաց անապատի արձանագրության ժամագինը դուրս չե գալիս մեր սակագնի ցուցակի սահմաններից՝ տեղ բռնելով ֆ 50-ի (= 2 ա. 22 կ.) ու ֆ 50-ի (= 6 ա. 11 կ.) արանքում:

Թարգմանչաց անապատի վիմարձանագրության մեջ կա զին, բայց վոչ սակագին: Այս սակագինը դանում ենք շատ հեռավոր հյուսիսում:

Պրոֆ. Յովան Կուլիշերը վերջերս լույս տեսած «Ռուսաց ժողովրդական տնտեսության պատմության» յերկրորդ հատորում հետևյան ե գրում ոռուաց վանքերի մասին:

«Притечали даяния... и за поминование как заздравное, при жизни, так и в особенности заупокойное, на помилование вечное и на поминование повседневное, даже по несколько раз в день, тайно или вполголоса... Обычная такса Михаило-Архангельского монастыря составляла, повидимому, 5 руб., вероятно за поминование души после смерти вкладчика. Огромное большинство записей состоит в 5-рублевых вкладах».<sup>4</sup>

Այսպես որեմն, ոռուաց վանքերում ել ժամապատարագների սակագին ե յեղել Տեսնենք, թե այժմյան արծաթով ու հիմակվա ոռուական

բացարձություն: Մերտեսանցը ոռուերենից թարգմանելով (հմտ. էջ 464) մեջ եր բերել հատկածը. «Խամգուլա Ղազինացին թվերով Աղբեկչանի շրջանները կամ թումանները (տասն հազարի) և նկարագրելով Նախիջևանի թումանը՝ ասում ե. թե նա բարկացած է հինգ քաղաքից, զայտնից վերջինն ե Բագու (էջ 467): Այս հատկածում հիշված հեղինակն անշուշտ Համզալիան Կաղինին ե, վորի աշխարհագրական աշխատությունը հորինված է 1339 թվականին (Բարտոլդ, 14): Վոր թումանը վարչական միավոր ել եր, այս վերջնականապես հաստատում է հայտնի արեգելագետ ակադեմիկ Բարտոլդը գրելով. «Группа селений обозначалось словом «рустак»; вокруг большого города обыкновенно было несколько «рустаков»... При монголах вместо слова «рустак» в большей части Туркестана, как в Персии, было введено слова «юмень» (собственно: «десять тысяч»), употреблявшееся еще при русском владычестве до 80-х годов, когда его заменило слово «волость» («К истории орошения Туркестана», составил академик В. В. Бартольд. СПБ, 1914, էջ 30):

Թումանի յերրորդ նշանակությունն է 10,000 զինար կամ դահեկան մանգուների մեջ, 10 դան կամ 10 հազարդան՝ պարսիկների մեջ ու 10 ոռուի: Անդպալասում:

<sup>1</sup> վանանդեցի, 28:

<sup>2</sup> վանանդեցի, 39:

<sup>3</sup> Marx „Zur Kritik“, 161, „К критике“, 157, Կուլիշեր „Лекции по истории экономики Западной Европы“, т. II, Петроград, 1923, էջ 214:

<sup>4</sup> Проф. И. М. Кулишер „История русского народного хозяйства“, т. II, Москва, 1925, էջ 386, 389:

փողով վորքան և անուամ Միխաիլո-Արխանգելսկի վանքի 5 ոռուրի սակագինը:

Խոսքը վերաբերում է գլխավորապես XVI դարի վերջերին: Առուանտեսագետների ասելով՝ այդ գարում ոռուաց ոռութին կամ գրիվենեկան հավասար եր 48 մսխալ արծաթի,<sup>1</sup> Հինգ ոռութին կանի ուղիղ 240 մսխալ =  $2\frac{1}{2}$  գունտ = 1024 գրամմ արծաթի: Հստ Կուլիշերի՝ արծաթի ու վոսկու հարաբերությունը XVI դարի վերջերին 1 առ 12 եր:<sup>2</sup> Մեր ժամանակի 1 առ 22 հարաբերությունից առաջացած արժեզրկումը  $83\frac{1}{2}\%$  է անուամ: 1024 գրամմը  $83\frac{1}{2}\%$  հավելումով կլինի 1872 գրամ: Այս ել 18 գրամմով բաժանելիս՝ ստանում ենք ուղիղ 104 ոռութի: Այս գեպքն ել դուրս չե գալիս մեր սակագնի ցուցակի սահմաններից՝ տեղ բռնելով Ա. 250-ի (= 122 ո. 20 կ.) ու Բ. 250-ի (= 91 ո. 65 կ.) արանքում:

Հայոց թարգմանչաց անապատի գեպքն ու ոռուաց Միխաիլո-Արխանգելսկի վանքի գեպքերի շարանը զանազան կողմերից, տարրեր դարերից ու վայրերից կրկին հաստատում են մեր այս փորձի մեջ արծաթած գըլշավոր մտքերը:

#### XIV.

Աշխատության հիմնական թեղիներ համարում ենք սրանք.

1. Հայաստանում ուշ միջնադարի ժամապատարագներն ունեցել են իրենց սակագինը և

2. Այս սակագնի հիման վրա կարելի յե հաշվել և յեզրակացություններ անել ուշ միջնադարի մեր տնտեսական կյանքի զանազան յերևույթների մասին:

Մեկ թվում ե, վոր այս թեղիները հաստատուն են և անտարակուսելի:

Մնացած չորս թեղինը մեր առաջին թեղինի կոնկրետացմանն են վերաբերում և սրանք են:

3. Ուշ միջնադարում ժամապատարագների միջին սակագինը 20—25 դասեկան և կամ 200—250 դրամ. սակագնի տատանման սահմաններն են՝ ցածից 5 դահեկանն ու բարձրից 75 դահեկանը.

4. Միջին սակագնի միջնադարյան արծաթի կշիռն է 200-ից մինչև 1,000 գրամմ կամ մոտ  $1\frac{1}{2}$  ֆնտից մինչև մոտ  $2\frac{1}{2}$  գունտ:

5. Միջին սակագնի արդի արծաթի կշիռը, վոր հիմնվում է արծաթի  $120\%$  արժեզրկման վրա, 440 գրամմից մինչև 2,200 գրամմ և կամ մոտ 1 ֆնտից մինչև մոտ  $5\frac{1}{2}$  գունտ:

6. Միջին սակագնին արդի ոռուական փողերով հավասար է 24 ո.

44 կոպեկից մինչև 122 ո. 20 կոպեկի:

Այս թեղիները հանել ենք վիմարձանագրությունների ակների մեջ ածանանությունն ոգտագործելով: Մեր աչքից խուսափած գեպքերի մեջ բերումն, ալագա նորագյուտ արձանագրությունները, հների նոր ընդորի-

<sup>1</sup> Կուլիշեր „История русской народной хозяйствства“, т. I, Москва, 1925, էջ 26, 142 ո. Սվատловский, 128:

<sup>2</sup> Կուլիշեր „Лекции“ II, 214:

Նակումներն ու լինելիք ճշտումներն, այլ և դրամագիտական նոր ավյալ-ներն անշուշտ կարող են վորոշ չափով սրբազրել կոնկրետացման մեր թե-զիսները—3-րդ, 4-րդ, 5-րդ ու 6-րդ թեզիսներն՝ առանց ամենելին խախտե-լու նրանց պատվանդանն, այն եւ առաջին հիմնական թեզիսը։ Վերջինս յուր արժողությունը պահպանում է բոլոր պարագաներում, իբրև պատմա-կան մի իրողություն հավաստող միտք։ Մնում ե յերկրորդ թեզիսը, վորի մասին կարելի յե ասել հետեւյալը։ Յեթե մեր գրականության մեջ ել լի-նելին երոպականի ու ոռւսականի նման աղբյուրներ, վորոնք հարուստ ու անմիջական տվյալներ պարունակեյին ուշ-միջնադարյան Հայաստանի տնտեսական յերեսութների մասին, մասնավորապես գների վերաբերյալ ապա մեր այս սակագնի այն կիրառումը, վոր մատնանշել ենք յերկրորդ թեզիսում, մեծ մասամբ ավելորդ կրառնար, չնայած վոր սակագինը կպահ-պաններ ոժանդակ միջոց լինելու յուր նշանակությունը։ Սակայն վորովհե-տե մեր տրոքված ու «փոքր ածուն» զուրկ ե այսպիսի մեծահարուստ աղ-բյուրներից, ուստի ժամապատարագների գնի, սակագնի ու միջին սակագնի մասին մեր կոահումը կարող ե դեր խաղալ և թեզուզ միջնորդաբար լեզու տալ ու խոսեցնել գրարձաններին, վորոնք մինչև այժմ շատ դեպքերում համը ելին մեր նյութական կուլտուրայի անցյալի նկատմամբ։

Յեզ այսպես, վորտեղ լուսմ են պատմագիրներն, այնտեղ աղաղակել են սկսում վեմերը։  
Քարերը դառնում են Հայաստանի տնտեսական զարգացման պատ-մության հիմնաքարեր։

1927 թ. ապրիլ  
Յերևան:



Անգլ



